AZG NEW 1.QXD 6/4/2009 11:58 PM Page 1


Ազգ
Azg

5 ՀՈՒՆԻՍ 2009 ՈՒՐԲԱԹ 103 (4239)

ISSN: 1829-1651


## Կալիֆոռնիայի սենատն ընդունել է Ցեղասպանության մասին բանաձեւը

Կալիֆոռնիա նահանգի սենատն ընդունել է Ցեղասպանության մասին 234 բանաձեւը: Ինչպես հաղորդում են Ամերիկայի հայկական համագումարից, օրինագիծը ներկայացրել է սենատոր Մարք Ուայլենդը: «ԱՀՀ-ն ողջունում է այդ բանաձեւի ընդունումը եւ սենատոր Ուայլենդին: Կալիֆոռնիան, ի դեմս իր պաշտոնական ներկայացուցիչների, հարգում է մարդու իրավունքները եւ պայքարում է ապագայում ցեղասպանությունների կանխման համար», հայտարարել է ԱՀՀ-ի արեւմտյան բյուրոյի տնօրեն Եղիշ Քեշիշյանը: Ավելի ուշ 234 բանաձեւը կստորագրի Կալիֆոռնիայի նահանգապետ Առնոլդ Շվարցենեգերը: Համաձայն օրինագծի, Կալիֆոռնիայի կրթության հանձնաժողովը պետք է ուսումնական ծրագրում ընդգրկի ցեղասպանությունների պատմությունը, այդ թվում նաեւ 1915-23 թթ. Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության պատմությունը:

# Մարդը բանտում է, որովհետեւ հայ է

### *Պատրիկ Արամյանը պատրաստվում է զբաղվել ջավախահայության իրավունքների ոտնահարման հարցերով*

Ջավախահայ քաղաքական ակտիվիստ, «Միասնական Ջավախք» շարժման առաջնորդ Վահագն Չախալյանի դատական գործը պաշտպանական կողմի բողոքարկմամբ 2009-ի մայիսին ուղարկվել է Թբիլիսիի վերաքննիչ դատարան: Միեւնույն ժամանակ, Թբիլիսիի քաղաքացիական գործերով վարչական դատարանում վերջերս կայացել է ֆրանսիացի փաստաբան, Փարիզի փաստաբանական կոլեգիայի անդամ Պատրիկ Արամյանին որպես Չախալյանի փաստաբանի չգրանցելու մասին Վրաստանի արդարադատության նախարարության որոշման բողոքարկման նիստը: Առաջին նիստի նման երկրորդն էլ ավարտվել է անարդյունք: Պատասխանող կողմը՝ Վրաստանի արդարադատության նախարարությունը դատարանին ներկայացրել է գործի հետ կապված փաստաթղթեր, դրանից հետո դատարանը ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելու պատճառաբանությամբ հետաձգել է դատավարությունը մինչեւ հունիսի 15-ը: «**Ազգի**» հետ զրույցում **Պատրիկ Արամյանը** ներկայացնում է իր դիրքորոշումը ինչպես Չախալյանի գործի, այնպես էլ ջավախահայության ոտնահարված իրավունքների մասին:



*Տես էջ 4*

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

# Սարգսյան-Ալիեւ հերթական հանդիպումը կայացավ

### *Հայկական կողմի շեշտադրումը՝ ինքնորոշման իրավունք*



**Նախագահի նստավայրից հաղորդում են, որ երեկ Սանկտ Պետերբուրգի «Բալթիկայի աստղ» հյուրանոցում կայացել է Սերժ Սարգսյանի հանդիպումը Իլհամ Ալիեւի հետ: ԼՂՀ հակամարտության խաղաղ կարգավորման բանակցային գործընթացում սանկտպետերբուրգյան հանդիպումը հինգերորդն էր Սերժ Սարգսյանի եւ Իլհամ Ալիեւի միջեւ: Հանդիպումը սկսվել է Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարներ Էդվարդ Նալբանդյանի եւ Էլմար Մամեդյարովի, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Յուրի Մերզլյակովի, Մեթյու Բրայզայի եւ Բեռնար Ֆասիեի, ինչպես նաեւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրչիկի մասնակցությամբ: Այնուհետեւ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները հանդիպումը շարունակել են դեմ առ դեմ ձեւաչափով: Մոտ 2.5 ժամ տեւած բանակցություններն այնուհետեւ կրկին շարունակվել են ընդլայնված կազմով: Երկու երկրների արտաքին գործերի նախարարներին հանձնարարվել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների աջակցությամբ շարունակել աշխատանքները կողմերի մոտեցումների համաձայնեցման եւ Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների նոր հնարավոր հանդիպման կազմակերպման ուղղությամբ: Այցի շրջանակում նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպել է Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հետ:**

**«Ազգ»-ի տվյալներով, հանդիպման հայկական կողմի գլխավոր շեշտադրումը եղել է ինքնորոշման իրավունքի հիմնապահանջը Արցախի համար:**

## Ֆրանսիայում լույս կտեսնի «Նոր Յառաջ» թերթ

Ըստ «Հայերն այսօր» էլեկտրոնային թերթի, արձագանքելով Փարիզի «Յառաջ» օրաթերթի տպագրության դադարեցմանը՝ մի խումբ նախանձախնդիր սփյուռքահայեր հայտարարում են «Նոր Յառաջի» ստեղծման մտահղացման մասին: Ինչպես տեղեկացնում է «Ֆրանս Արմենի» ամսագիրը, հիշյալ գաղափարի շուրջն են համախմբվել ֆրանսահայ մտավորականության հայտնի դեմքերը: Ըստ ամսագրի, ֆրանսահայերը հայերեն մամուլի կարիք ունեն եւ այս պատճառով անընդունելի են համարում «Յառաջի» պես օրաթերթի կորուստը: Այդ նպատակով էլ ստեղծվել են «Նոր Յառաջ» եւ «Նոր Յառաջի» ընկերներ» ընկերակցությունները, որոնք պատրաստ են հովանավորել եւ աջակցել այս մտահղացման իրականացմանը: Օրաթերթը կունենա գլխավոր խմբագիր, հրատարակչական գծով խմբագրի տեղակալ եւ երեք խմբագիր: «Նոր Յառաջը» լույս կտեսնի ընթացիկ տարվա հոկտեմբեր ամսից:

## Ֆլորանս Մարտիրոսյանը՝ Եվրոխորհրդարանի ընտրությունների թեկնածու

Ըստ «Հայերն այսօր» էլեկտրոնային թերթի, Ֆլորանս Մարտիրոսյանը «Ֆրանսիայի ժողովրդավարական շարժում» կուսակցության հարավարեւելյան ընտրատարածքի ցուցակում 6-րդն է Եվրոխորհրդարանի հունիսի 7-ին կայանալիք ընտրություններում: Այս մասին տեղեկացնում է «Ֆրանս Արմենի» ամսագրի կայքէջը: Նախկինում Հայ դատի գրասենյակի ակտիվ անդամ, 33-ամյա Ֆլորանսը ավարտել է Սորբոնի համալսարանը՝ ստանալով քաղաքագիտության դոկտորի կոչում: 2004 թվականից առ այսօր աշխատում է ԵԱՀԿ-ի Արեւելյան Եվրոպայի կառույցներում: Այժմ նա Եվրոպական աշխարհաքաղաքական հետազոտությունների կենտրոնի գլխավոր քարտուղարն է եւ «Ճանաչում» խմբի հիմնադիր անդամ:

## Էդիկ Բաղդասարյանի դեմ բռնարարքի գործով դատը սկսվել է

Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում՝ Մնացական Մարտիրոսյանի նախագահությամբ, հունիսի 4-ին սկսվեց «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության նախագահ, լրագրող Էդիկ Բաղդասարյանի դեմ բռնարարքի գործով դատաքննությունը: Գործով ամբաստանյալը մեկն է՝ 1982-ին ծնված Կարեն Հարությունյանը: Սակայն, ըստ տուժողի, հարձակվողները երեքն են եղել: Նրանց մասով գործն անջատվել է առանձին վարույթի: Նիստում Է. Բաղդասարյանը հայտարարեց, որ բռնարարքը կապում է իր մասնագիտական գործունեության հետ: Դեպքին նախորդող շրջանում ինքը մեծ հոդված է գրել բնապահպանության նախկին նախարար Վարդան Այվազյանի բիզնեսի մասին: Նա նշեց, որ թեեւ չի ճանաչում ամբաստանյալին, սակայն այն, որ ամբաստանյալի մայրը եղել է Վ. Այվազյանի բժիշկը եւ նրա ընտանիքի մտերիմներից, կասկածներ է առաջացնում, որ ամբաստանյալը մասնակցել է դեպքին, հաղորդում է «Նոյյան տապանը»:

## Իտալիայում կայանալիք հանդիպման մասին լուրը իրականությանը չի համապատասխանում

**Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներ Սերժ Սարգսյանի եւ Իլհամ Ալիեւի՝ մոտ ժամանակներս Իտալիայում կայանալիք հանդիպման մասին Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուի հայտարարությունն արված է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվության հիման վրա: Այս մասին «Արմենպրեսին» հայտնեց ԱԳՆ մամուլի խոսնակ Տիգրան Բալայանը՝ մեկնաբանելով Թուրքիայի ԱԳ նախարարի հայտարարությունը:**

### «Անկարան ցանկանում է նորմալացնել հարաբերությունները Երեւանի հետ»

**Այդ մասին, ինչպես հաղորդել է թուրքական Cihan գործակալությունը, Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն հայտարարել է Վաշինգտոն այցի շրջանակներում անցկացված մամուլի ասուլիսում: «Հարավային Կովկասում խաղաղություն եւ կայունություն հաստատելու համար մենք ցանկանում ենք նորմալացնել հարաբերությունները հարեւան երկրների, այդ թվում՝ Հայաստանի հետ», ասել է Դավութօղլուն: Նրա խոսքով՝ Հարավային Կովկասում խաղաղություն հաստատելու համար անհրաժեշտ է լուծել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ առկա հիմնախնդիրները: «Յուրաքանչյուրը պետք է հնարավոր ամեն ինչ անի Կովկասում խաղաղություն հաստատելու համար», հավելել է Թուրքիայի արտգործնախարարը, հաղորդում է «Արմենպրեսը»:**

## Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

**Տեւական ընդմիջումից հետո շարունակում ենք Վիլյամ Սարոյանի եւ Մանուել Թոլեգյանի՝ արվեստի մասին զրույցների հրապարակումը: Այս համարում՝ հետաքրքրական հայացք եւ վերաբերմունք ավանգարդ արվեստին:**

**«Պիտեր Բրուք, Իրինա Բրուք եւ եվրոպական թատրոնի առասպելական տոհմը»՝ Երվանդ Ազատյանի անդրադարձը՝ ապրիլին Իրինա Բրուքի բեմադրած «Տեղ մը... Լամանչա» թատերախաղի առիթով:**

**«Գրական նամականի» խորագրի ներքո զետեղված են երկու մասունք հայր եւ որդի Կոստան եւ Արմեն Զարյաններից. երկու նամակ՝ մոսկվաբնակ բանաստեղծ, Կ. Զարյանի «Նավը լեռան վրա» վեպի ռուսերենի թարգմանիչ Աշոտ Սահրատյանին:**

**Գրիգոր Զոհրապի եղերական մահվան հետ կապված նոր փաստ՝ ազգային գրադարանի մատենագետ Սուսաննա Գալստյանի մատուցմամբ:**

**Թատերագետ Վարսիկ Գրիգորյանի հայացքը Արմեն եւ Աննա Էլբակյանների Սարոյանական ներկայացումներին:**

**Ալեքսանդր Թոփչյանի վերջին՝ «Բանկ Օտոմանի դարավոր գրավումը» վեպի մասին Արտեմ Հարությունյանի մտորումները:**

**«Անցյալի էջեր» խորագիրը ներկայացնում է Հայաստանի 1920-30-ական թվականների գիտական մթնոլորտի եւ պետական պաշտոնյաների համեստ ապրելակերպի մասին մի փոքրիկ հատված, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆ. Եղիշե Մովսիսյանի հուշերի պատառիկներից:**

**Երեւանյան նոր հրատարակությունների տեսություն ըստ Գեւորգ Յազըճյանի: Մ. Բ.**

# Ժամանակավոր հանձնաժողովը միջնորդում է նախագահին՝ համաներում կիրառել

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Մարտի 1-ի դեպքերը քննող ԱԺ ժամանակավոր հանձնաժողովը դիմել էր նախագահի նստավայր՝ հարցով, թե արդյոք մարտի 1-ին արտակարգ դրություն հայտարարելու առիթով գործե՞լ է ինչ-որ հատուկ շտաբ. այս հարցի պատասխանը ստանալն անհրաժեշտություն էր դարձել այն բանից հետո, երբ նախկին ոստիկանապետ Հայկ Հարությունյանը հանձնաժողովում խոսքի մեջ ասել էր այդպիսի շտաբի մասին: Հայաստանի նախագահի օգնական Գեւորգ Կոստանյանը պատասխանելով այդ հարցմանը գրել է, թե 2008 թվականի մարտի 1-ին արտակարգ դրություն հայտարարելու կապակցությամբ նախագահի նստավայրում շտաբ չի ստեղծվել, այդ իսկ պատճառով այդպիսի շտաբի գործունեության կամ իրավասությունների վերաբերյալ որեւէ փաստաթուղթ չկա: Արտակարգ դրություն հաստատելու հրամանագրի կատարումն իրականացնող կառավարությունից եւս պարզաբանում է ստացվել հանձնաժողով, թե ուղարկվում են 2008 թվականի մարտի 2-ին ոստիկանապետի եւ պաշտպանության նախարարի համատեղ հաստատած ՀՀ պաշտպանության նախարարության եւ ոստիկանության՝ հրատապ կարգով իրականացվող միջոցառումների պլանի եւ ոստիկանապետի մոտ 2008 թվականի մարտի 2-ին կայացած օպերատիվ խորհրդակցությունների արձանագրությունների պատճենները: Մարտի 2-ին կայացած խորհրդակցության արձանագրությամբ առաջարկվել է կազմավորել արտակարգ դրության ղեկավարման շտաբ (պաշտպանության նախարարի գլխավորությամբ), այդ շտաբի կազմում են եղել ոստիկանապետի տեղակալ Գրիգորյանը, Երեւանի կայազորի պետ Յուրի Խաչատուրովը, փոխոստիկանապետ Ալեքսանդր Աֆյանը, փոխոստիկանապետ Արմեն Երիցյանը:

*Տես էջ 2*

AZG NEW 2.QXD 6/4/2009 11:22 PM Page 1



ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ

# Քրեական գործ եւ վերահաշվարկ ընտրական խախտումների համար



Երեկ ՀՀ գլխավոր դատախազության քննչական ծառայությունում հարուցված քրեական գործի շրջանակներում բացվեցին Մալաթիա-Սեբաստիա համայնքներում գտնվող թիվ 8/01 եւ 8/03 ընտրատեղամասերի պարկերը եւ կատարվեց վերահաշվարկ:

Թիվ 8/01 եւ 8/03 ընտրատեղամասերի երկու պարկերը բացված եւ կրկին փակված էին: Պարկերի վրայից բացակայում էին կնիքներն ու հանձնաժողովների երեք անդամների ստորագրությունները: Պարկերում եղած որոշ փաթեթներ նույնպես բաց էին ու բացակայում էին 3 անձի ստորագրությունները: Թիվ 8/01 ընտրատեղամասի մարված քվեաթերթիկների փաթեթի վրա նշված էր 522 քվեաթերթիկ, իսկ վերահաշվարկից հետո այդ թիվը հասավ 528-ի: Օգտագործված ելունդների թիվը 4-ով ավելին էր: Իսկ մատյաններում ընտրության օրը ստորագրել էր 1477 մարդ, սակայն գրված էր 1480: Վերահաշվարկից հետո ՀՀԿ-ի օգտին արձանագրվեց 624 քվե, 623-ի փոխարեն: Թիվ 8/03 ընտրատեղամասի պարկում եղած փաթեթները փակ էին, բայց ոչ կնքված էին, ոչ էլ ստորագրված: Չօգտագործված քվեաթերթիկների փաթեթում առկա քվեաթերթիկներն ամբողջովին պատռված էին, որոնք հաշվել հնարավոր չէր, եւ կային ելունդներ, որոնք ուրիշ փաթեթներում պետք է լինեին: Իսկ թիվ 8/08 ընտրատեղամասի պարկը փակված էր եւ նրանում առկա 18 փաթեթները կնքված ու ստորագրված էին ըստ սահմանված կարգի: Մարված 743 քվեաթերթիկները համապատասխանում էին արձանագրությունում նշված թվին: Ելունդները՝ 1157, ծրարները՝ 1147, ընտրողների ցուցակները՝ 1166, գտնվեց անվավեր 5 քվեաթերթիկ: ՀՀԿ-ի 466 քվեից մեկը համարվեց անվավեր, իսկ ՀՅԴ-ի 163-ից՝ 3-ը, ՕԵԿ-ի 183-ից՝ 2-ը:

Թիվ 8/09 ընտրատարածքի պարկը եւ 13 փաթեթները նորմալ էին: Չօգտագործված-մարված քվեաթերթիկները՝ 531, ելունդները՝ 1249, որից երկուսը պակաս էր: Օգտագործված ծրարներից 1254-ից 5-ն ավելի է: Ցուցակներում առկա էր 1249 ստորագրություն: Ընդհանուր առմամբ այս ընտրատեղամասում խախտումներ չկան, կային չնչին բացթողումներ: Այս ընտրատարածքների վերահաշվարկով հարուցված առաջին քրեական գործն ավարտվեց: Վերջնական արդյունքները պարզ կլինեն փորձագետների եզրակացությունից հետո:

Երեկ «Ժառանգություն» կուսակցության անդամ Անահիտ Բախշյանից ստացված բողոքի հիման վրա գլխավոր դատախազությունը հարուցել է նոր քրեական գործ եւ նշանակել վերահաշվարկ հինգ նոր ընտրատարածքներում՝ երեք տարբեր հոդվածների հատկանիշներով՝ աշխատանքներին խոչընդոտելու, քվեարկության արդյունքները կեղծելու եւ ուրիշի փոխարեն քվեարկելու պատճառաբանությամբ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

# Լրագրող Մարիանա Գրիգորյանը՝ «Ցայթ» հիմնադրամի մրցանակակիր

**Գերմանական «Ցայթ»- Էբելին եւ Գերդ Բուցերիուս հիմնադրամը հունիսի 3-ին Օսլոյում 10-րդ անգամ խրախուսական մրցանակներ է հանձնել Արեւելյան Եվրոպայի անկախ լրագրողներին: Նույն օրը հրապարակված մամլո հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ 2009-ին առաջին անգամ Հայաստանի անունն էլ տեղ է գտել մրցանակակիրների ցուցակում: 10 000 եվրո պարգեւավճարի է արժանացել Երեւանից ազատ լրագրող, «Եվրասիանեթի» աշխատակից Մարիանա Գրիգորյանը, որի ուշադրության կենտրոնում են բնապահպանական, ներքաղաքական թեմաները:**

**10 000-ական պարգեւավճարի արժանացած 2009-ի մյուս մրցանակակիրներն են Մոսկվայի «Նովայա գազետայի» հետաքննող լրագրող Ռոման Շլեյնովը, «Նովիե իզվեստիա», «Եժեդնեւնի ժուռնալ» լրատվամիջոցների աշխատակից Զոյա Սվետովան, Բաքվի «Բիզիմ յոլ» ընդդիմադիր թերթի աշխատակից Նաթիգ Գավադլին:**

**Մինսկում բելառուսերեն տպագրվող «Նովի չաս» ընդդիմադիր, գրական հրապարակախոսական, վերլուծական շաբաթաթերթը, որ պատրաստում են տեղի տպագիր լրատվամիջոցների լրագրողներն ու բելառուս գրողների միությունը, ինչպես նաեւ 2001-ին Բաթումում լույս տեսնող «Բաթումելեբի» շաբաթաթերթը, 1989-ին հիմնադրված ադրբեջանական «Ազադլիգ» օրաթերթը արժանացել են 30 000-ական եվրոյի:**

**«Ցայթ» հիմնադրամը հեղինակել է իրավաբան, հրատարակիչ, հրապարակախոս Գերդ Բուցերիուսը՝ 1971-ին՝ անվանակոչելով այն իր հայտնի՝ «Դի ցայթ» շաբաթաթերթի, իր եւ իր երկրորդ կնոջ անուններով: Հիմնադրամը խրախուսում է գիտահետազոտական, արվեստի ու մշակույթի, կրթության ու դաստիարակության ոլորտները: 2000 թվականից հիմնադրամը խրախուսում է Արեւելյան Եվրոպայի ազատ լրագրությունը:**

**«Ազատ լրատվամիջոցները զերծ չեն սպառնալիքներից: Ռուսաստանում, Բելառուսում, Վրաստանում եւ արեւելաեվրոպական մյուս երկրներում ճնշումը իսկայական է: Կարծիքի ազատությունը, ազատ խոսքի զարգացումն ու ամրապնդումը շատ կարեւոր են մեզ համար, 10-րդ անգամ մրցանակների շնորհումը դրա մասին է վկայում», ընդգծել է «Ցայթ» հիմնադրամի ներկայացուցիչ Մարկուս Բաումանը:**

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

# Մանդատից հրաժարվելը, ըստ Դավիթ Հակոբյանի, քաղաքական իդիոտիզմ է

**Հայ ազգային կոնգրեսի անդամ, Մարքսիստական կուսակցության նախագահ Դավիթ Հակոբյանը երեկ «Փաստարկ» ակումբում հայտարարել է, թե ինքն ու իր կուսակցությունը դեմ են Երեւանի ավագանու մանդատները չվերցնելու Հայ ազգային կոնգրեսի որոշմանը: Դավիթ Հակոբյանը սխալ է համարում մանդատները չվերցնելը, քանի որ դա նշանակում է ազգի համար կարեւոր ամբիոնի կորուստ, որն օգտագործելը կտար կրկին կրիտիկական զանգված հավաքելու հնարավորություն, ինչպես նախագահի ընտրությունից հետո ընկած շուրջօրյա հանրահավաքների ընթացքում:**

**Ըստ Դավիթ Հակոբյանի՝ կոնգրեսը ակնհայտորեն կորցնում է իր ընտրազանգվածին, ինչի ապացույցն այն է, որ նախագահի ընտրությանը Երեւանում Լեւոն Տեր-Պետրոսյանն ավելի շատ ձայն էր ստացել, քան ստացավ քաղաքապետի ընտրությանը:**

**Դեմ լինելով բոյկոտին, Հակոբյանն այդուամենայնիվ չի վերցնի մանդատը, եթե ՀԱԿ-ը չփոխի մանդատից հրաժարվելու որոշումը: Հակոբյանն ասում է, որ կոնգրեսի անդամ այլ կուսակցությունների առաջնորդներ էլ, իր հետ մասնավոր զրույցների ընթացքում, դեմ են արտահայտվել բոյկոտին:**

**Մանդատից հրաժարվելն, ըստ Դավիթ Հակոբյանի, քաղաքական իդիոտիզմ է, քաղաքական տկարամտություն: Մարքսիստը պատրաստ է նաեւ միայնակ գնալ հանրապետականների հետ կռվի, եթե կոնգրեսը որոշի գեթ մեկ տրիբուն ուղարկել ավագանի:**

Ն. Մ.

# Այսօր

- **11.00-Հայաստանի կենտրոնական բանկում տեղի կունենա մրցանակաբաշխություն՝ սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտի նյութերի համար:**
- **11.00-Հայաստանի ֆինանսների նախարարությունում տեղի կունենա կրթության որակի ծրագրի քննարկում ֆինանսների նախարարի եւ ՀԲ-ի տնօրենի մասնակցությամբ:**
- **11.00-ԳԱԱ-ում տեղի կունենա իմամ Խոմեյնու մահվան 20-րդ տարելիցին նվիրված «Իմամ Խոմեյնին եւ հոգեւոր բարոյական խրատների տարածումը» անվանմամբ գիտաժողով:**
- **11.00-«Հայելի» ակումբում Սեւանի հիմնախնդիրներից կխոսեն բնապահպաններ Հակոբ Սանասարյանն ու Բորիս Գաբրիելյանը:**
- **12.00-Ազգային գրադարանում տեղի կունենա «Ջոն Կիրակոսյան. անկախ պետականության եւ քաղաքական հայագիտության ակունքներով» գրքի շնորհանդեսը:**
- **13.00-«Տեսակետ» ակումբի հյուրն է Սուրեն Սուրենյանցը:**
- **14.00-«Տեսակետ» ակումբի հյուրը կլինի բանաստեղծ եւ նախկին քաղբանտարկյալ Մերուժանը:**
- **14.30-«Հայացք» ակումբի հյուրերն են Արմեն Մարտիրոսյանը եւ Զարուհի Փոստանջյանը:**
- **15.00-Գրողների միության տանը հունիսի 5-9 Գերմանիայի շաբաթների շրջանակում կազմակերպվելու է ծաղրանկարների ցուցահանդես:**
- **16.00-«Մոսկվա» կինոթատրոնում «Շրջակա միջավայրի պահպանության միջազգային օրվա» կապակցությամբ, բնապահպանները կազմակերպում են որսագողության մասին ֆիլմի եւ Հայաստանի բնության լուսանկարների ցուցադրում:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ժամանակավոր հանձնաժողովը միջնորդում է նախագահին՝ համաներում կիրառել

*1-ին էջից*

Այս խորհրդակցություններն, ըստ այդ գրության, փաստորեն մարտի 2-ին են տեղի ունեցել, այդ իսկ պատճառով հանձնաժողովի դիտորդ անդամ Արամ Կարապետյանը վերստին ճշտեց՝ մարտի 1-ին, մինչեւ արտակարգ դրություն հայտարարելը, գործե՞լ է այդպիսի շտաբ, համակարգող մարմին, ու քանի որ այդ հարցի պատասխանը չկար՝ կրկին խնդիր առաջացավ այդ մասին նոր հարցում անելու համապատասխան մարմիններին, եւ անգամ հանձնաժողովականներից մեկը՝ Արտավազդ Վարդանյանը եւս պնդում էր դիմել երկրորդ նախագահին՝ ոչ ֆորմալ շտաբի մասին հարցնելով: Ս. Նիկոյանը տարակուսեց. «Ի՞նչ, հարցնենք՝ գաղտնի շտաբ եղե՞լ է, մենք դիմենք, նրանք էլ հայտնեցին, հա՞»: Բայց եւ ասաց՝ ձեւակերպեք նամակը, կմնա ստորագրել եւ ուղարկել:

Հանձնաժողովի երեկվա աշխատանքային խորհրդակցության օրակարգում հանձնաժողովականներից Արծվիկ Մինասյանի եւ Նաիրա Զոհրաբյանի առաջարկով ընդգրկվել էր մի որոշման նախագիծ, որով առաջարկվում է դիմել Հայաստանի նախագահին՝ սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան համաներում հայտարարելու միջնորդությամբ, միեւնույն ժամանակ համաներումը չտարածելով 2008-ի մարտի 1-2-ին տեղի ունեցած դեպքերի ժամանակ մահացած անձանց մահվան հանգամանքներում ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներով մեղադրվող անձանց նկատմամբ:

Զեկուցող Արծվիկ Մինասյանը հստակեց, որ հանձնաժողովում տարբեր առիթներով խոսել են հասարակությունում առկա բարձր լարվածությունը թուլացնելու անհրաժեշտության մասին, խափանման միջոցը փոխելու տարբեր միջնորդություններ են ներկայացրել եւ այլն, այնպես որ երկրի նախագահի հայտարարությունից հետո նպատակահարմար է, որ հենց ժամանակավոր հանձնաժողովը որպես քաղաքական ուժերից կազմված մարմին համաներման նախագիծ առաջարկի, որպեսզի հանձնաժողովի դիրքորոշումը հստակ, պարզ եւ ընկալելի լինի հասարակությանը: Ապա ներկայացրեց նախագծի հիմնավորումները. քաղաքական ուժերից եւ հանրային կառույցներից առաջարկներ ստանալու նախագահի պատրաստակամությանն ուղղված արձագանք, ապա ԺՀ-ի՝ ուսումնասիրություններն ու քրեակատարողական հիմնարկներ այցելությունների արդյունք որպես, ինչպես նաեւ մարտի 1-ի դեպքերի պատճառով անազատության մեջ հայտնված անձանց հանդեպ համաներում կիրառելու հետեւանքով կթուլանա հասարակության մեջ լարվածության բարձր աստիճանը, ինչը համահունչ է նաեւ ԵԽԽՎ բանաձեւերի առաջարկներին: Բացի այդ՝ հանձնաժողովը կարեւորում է հասարակության տարբեր ուժերի միջեւ առողջ երկխոսություն ծավալելու, վստահություն ձեւավորելու անհրաժեշտությունը, ճշմարտությունը բացահայտելու հանձնաժողովի որդեգրած մոտեցումները:

Նաիրա Զոհրաբյանը հստակեցրեց, թե լավ կլինի առաջարկի առանցքը մարտի մեկը լինի, չնայած դեմ չէր նաեւ ընդհանուր համաներմանը:

Արամ Կարապետյանը դեմ էր փաստաթղթին. «Եթե քաղաքական մարմին է հանձնաժողովը, եւ մենք քաղաքական որոշում ենք կայացնում, ես դեմ եմ այս քաղաքական փաստաթղթին, որովհետեւ մենք բոլորս քաղաքական կուսակցություններ ենք եւ առանձին-առանձին կարող ենք մեր դիրքորոշումը դրսեւորել... Այն մարմինը, որ պետք է հաստատի՝ ինքն է դիմում համաներման համար», տարակուսեց նա:

Եվ առաջարկեց. եթե քաղաքական փաստաթուղթ է՝ խորհրդակցություններն առավել լայն անել, մի խոսքով՝ Ա. Կարապետյանը դեմ էր այս առաջարկին, սակայն ակտիվորեն քննարկում էր, թե ո՞ւմ վրա պետք է տարածվի կամ չտարածվի համաներումը:

Ա. Մինասյանի խոսքից պարզ դարձավ, որ համաներման առաջարկը վերաբերում է մարտի 1-ի գործերով 54 մեղադրյալներին, այդ թվում՝ հետախուզման մեջ գտնվող Խաչատուր Սուքիասյանին եւ Նիկոլ Փաշինյանին:

AZG NEW 3.QXD 6/4/2009 10:46 PM Page 1



ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ

# Կավելանան գյուղատնտեսական անտոկոս վարկեր ստացողները

Կառավարությունը կընդլայնի գյուղերում անտոկոս վարկ վերցրած ձեռնարկությունների եւ անհաս ձեռներեցների շրջանակը: Այդ մասին լրագրողներին հայտնեց ֆինանսների նախարար **Տիգրան Դավթյանը**: Նա նշեց, որ այս տարվա մարտից այդ փորձնական ծրագրի շրջանակներում ընդգրկված Շիրակի եւ Գեղարքունիքի մարզերի 60 առավել խոցելի համայնքներին տրամադրվել են մի քանի տասնյակ վարկեր, որոնց 10 տոկոս տոկոսադրույքների մարումը պետությունը վերցրել է իր վրա:

Նախարարը տեղեկացրեց, որ ծրագիրը կշարունակվի մինչեւ այս տարեվերջ եւ հետագայում կընդգրկի արդեն նաեւ այլ մարզեր: Առաջին անգամ գյուղատնտեսական վարկ վերցնողներին պետությունը կսուբսիդավորի վարկի ողջ տոկոսադրույքը: Բացի այդ, պետությունը կսուբսիդավորի նաեւ գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի եւ «Հազարամյակի մարտահրավեր-Հայաստան» հիմնադրամի տրամադրած գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքները:

Տիգրան Դավթյանը հավանական համարեց հաջորդ տարվա բյուջեում այս ծրագրի համար առանձին տողով գումարների տրամադրումը: Նա նաեւ հավաստիացրեց, որ սուբսիդավորման ծրագրում ընդգրկվելու համար սահմանված են բավականին խիստ չափանիշներ, ինչը թույլ կտա զերծ մնալ դրանում խոշոր ձեռնարկություններ ընդգրկելուց:

Անդրադառնալով բանկերի վարկերի տրամադրման խնդիրներին, ֆինանսների նախարարը նշեց, որ կառավարությունը փորձում է վարկերի տրամադրումը խթանել նախ լրացուցիչ ռեսուրսներ ներգրավելով միջազգային կառույցներից եւ ավելացնելով վարկային առաջարկը: Այնուհետեւ, հատուկ ստեղծված օպերատիվ շտաբի միջոցով աջակցում է առավել հեռանկարային ընկերություններին` նրանց վարկեր ստանալու համար տրամադրելով պետական երաշխիքներ կամ մասնակցելով նրանց կապիտալին: Իսկ հիպոթեկային շուկան ակտիվացնելու համար քայլեր են ձեռնարկվում Հայաստանում հիպոթեկային նոր ընկերություն ստեղծելու:

Տիգրան Դավթյանը կարծիք հայտնեց նաեւ, որ համաշխարհային տնտեսության մեջ անկման երեւույթներն աստիճանաբար դադարում են եւ ի հայտ են գալիս կայունացման որոշակի միտումներ: Դրանց արտացոլումն, ըստ նախարարի, առաջիկայում կնկատվի Հայաստանի տնտեսության մեջ, որի արդյունքում վարկերի տրամադրման գործընթացը կվերադառնա իր նախկին հունին: Նա վարկերի կրճատման փաստը համարեց օբյեկտիվ իրողություն, որը բնորոշ չէ միայն Հայաստանի բանկային համակարգին: Բոլոր երկրներում էլ բանկերը դարձել են չափազանց զգուշավոր, քանի որ ռիսկերն ավելանում են, իսկ վարկառուների վճարունակությունը` նվազում:



ARMENPRESS

Ֆինանսների նախարարը անդրադարձավ նաեւ կառավարությունից Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին պետական երաշխիքներով տրամադրված 10 մլն դոլար վարկին, ասելով, որ օրերս կոմբինատն արդեն ամբողջությամբ մարել է այդ վարկը: Միաժամանակ Տիգրան Դավթյանը նշեց, որ այդ վարկի շնորհիվ կոմբինատը կարողացավ շարունակել իր ներդրումային ծրագրերը եւ պահպանել հազարավոր աշխատատեղեր:

**Ա. Ս.**

# Լրացուցիչ խթան Հայաստանի տնտեսական ակտիվության համար

## *«Պանարմենիան էքսպո 2009» ցուցահանդեսն ու տնտեսական համաժողովը*

Հայաստանի եւ արտերկրի ընկերությունների մասնակցությամբ Հայաստանում ամենախոշոր տնտեսական ցուցահանդեսներից մեկը նախատեսվում է կազմակերպել այս տարվա հոկտեմբերի 23-25-ը Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում: Ցուցահանդեսի ընթացքում կկազմակերպվի նաեւ համահայկական տնտեսական համաժողով, որտեղ կքննարկվեն մեր երկրի տնտեսական կացության եւ զարգացումների հարցերը: Հունիսի 2-ին այս ցուցահանդեսի եւ գործարար համաժողովի կազմակերպման վերաբերյալ համագործակցության պայմանագիր կնքեցին միջոցառումների նախաձեռնողները` Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատն (ՀԱԱՊ) ու սփյուռքի նախարարությունը:

Նախատեսվող «Պանարմենիան էքսպո 2009» երրորդ համահայկական ցուցահանդեսի եւ տնտեսական համաժողովի մանրամասների վերաբերյալ զրուցեցինք ՀԱԱՊ գործադիր տնօրեն **Արա Վարդանյանի** հետ: Նա նախ նշեց, որ ՀԱԱՊ-ի եւ սփյուռքի նախարարության միջեւ պայմանագիրը կողմերի երկարատեւ համագործակցության վերաբերյալ է` սփյուռքի կազմակերպություններին Հայաստանում անցկացվող բիզնես նախաձեռնությունների մեջ ընդգրկելու համար:

Հոկտեմբերին նախատեսված ցուցահանդեսը, ըստ ՀԱԱՊ-ի գործադիր տնօրենի, նպատակ ունի խթանելու Հայաստանի եւ տարբեր երկրների համատեղ գործարար եւ ներդրումային ծրագրերը, բացահայտելու Հայաստանի տնտեսական ներուժը: Ակնկալվում է մասնակիցների մեծ թիվ Հայաստանից եւ արտերկրից` առավելապես հոծ հայկական սփյուռք ունեցող երկրներից: Առեւտրաարդյունաբերական պալատը ներկայացուցիչներ ունի 18 երկրներում, որոնք աշխատում են այդ երկրներում ցուցահանդեսի եւ համաժողովի հնարավոր մասնակիցների հետ: Դրանք եվրոպական, ԱՊՀ երկրներն են, ԱՄՆ-ն: Նախատեսված են տաղավարներ 120-150 ընկերությունների համար: «Դա կլինի Հայաստանի ամենամեծ ցուցահանդեսներից մեկը: Ինչո՞ւ այդ ամսին, որովհետեւ կանխատեսվում է այս տարվա վերջին եռամսյակում ճգնաժամի թուլացումը եւ սա լրացուցիչ խթան կլինի Հայաստանի տնտեսության ակտիվության համար», նշեց ՀԱԱՊ-ի գործադիր տնօրենը:

Ցուցահանդեսում իրենց արտադրանքն ու ծառայություններն են ներկայացնելու արդյունաբերության, շինարարության, ինովացիոն տեխնոլոգիաների, առողջապահության, գյուղատնտեսության եւ սննդարդյունաբերության, զբոսաշրջության եւ այլ ոլորտների ընկերությունները: Այն կիրառձակվի ինտերնետով` օն լայն ռեժիմով: Օտարերկրյա մասնակիցների համար գործում է «Իմ հայ գործընկերը» ծառայությունը, որը մասնակիցների ցանկության դեպքում ցուցահանդես կհրավիրի շահագրգիռ գործարարներին կամ կկազմակերպի այցեր դեպի տվյալ ընկերություններ: Գործարարներն, ըստ հետաքրքրությունների եւ ոլորտների, կարող են քննարկումներ կազմակերպել եւ պայմանավորվածություններ ձեռք բերել:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Առաջին բյուջետային երաշխիքը` կառուցապատող ընկերությանը

Երեւանի Կենտրոնում, Ձորափի 40 հասցեում կառուցվող բազմագործառնական շենքի շինարարությունն ավարտին հասցնելու համար, «Ամերիաբանկից» վարկային միջոցներ ներգրավելու նպատակով, կառավարությունը շինարարական «Էլիտ գրուպ» ընկերությանը երեկ տրամադրեց 2,5 մլն դոլարի բյուջետային երաշխիք` «երեք տարի մարման ժամկետով վարկի հիմնական գումարի վճարային պարտավորության ապահովման միջոց` անակցեպտ գանձման իրավունքով»: Անդրադառնալով այս որոշմանը, վարչապետ Տիգրան Սարգսյանը հայտնեց, որ սա շինարարությունը խթանելու նպատակով կառավարության բավարարած առաջին հայտն է եւ առաջիկայում պատրաստ են քննարկել այլ առաջարկներ եւս:

**Ա. Ս.**

ԵՐԿԱԹՈՒՂԻ

# Նախապատրաստվում են Թուրքիա-Հայաստան սահմանի բացմանը

**«Հարավկովկասյան երկաթուղի ՓԲԸ-ի ուղեւորաշրջանառությունն աճել է 46 տոկոսով», երեկ «Նովոստի մամուլի կենտրոնում տեղեկացրեց ՀԿԵՈւ գլխավոր տնօրեն Շեւքեթ Շայդուլինը: Վերջինիս խոսքերով` ուշադիր վերլուծելով ՀՀ ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղեւորաշրջանառության կառուցվածքը, կնկատենք, որ 4 ամսվա ընթացքում աճը կազմել է 3.5 տոկոս:**





**«Հայաստանի ուղեւորաշրջանառության 90 տոկոսը կազմում են ավտոմոբիլային փոխադրումները, այսինքն` դա երկաթուղայինների համար աշխատանքի որոշակի դաշտ է, մասնավորապես` աշխատանքի որակի բարձրացման, նոր ծառայությունների, նոր ժամանակացույցի ներդրման համար», ասաց Շայդուլին:**

**Նա նկատեց, որ ճիշտ ընդունված սակագնային քաղաքականությունն ու մերձքաղաքային երթեւեկության կազմակերպումը թույլ են տվել ընկերությանը 46 տոկոս աճ գրանցել:**

**Շայդուլինը նաեւ հայտնեց, որ ապրիլից բարձրանում է իր աշխատողների վարձատրությունը 23.4%-ով. միջին աշխատավարձը կկազմի 115.000 դրամ:**

**2009-ի առաջին քառորդի ընթացքում հայկական երկաթուղու զարգացմանն ուղղված ներդրումը կազմել է 191 մլն ռուբլի: Բանախոսը նկատեց, որ «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությունը համապատասխան աշխատանքներ է իրականացնում հայկական երկաթուղու նախապատրաստմանը` Հայաստանի եւ Թուրքիայի սահմանի հնարավոր բացման դեպքում:**

**«Նախապատրաստական աշխատանքների կազմակերպումն ընթանում է ամենաբարձր մակարդակով: Այժմ մշակվում է հայ-թուրքական սահմանին գտնվող «Ախուրյան» կայարանի կառավարման միջազգային կազմակերպության ստեղծման եւ զարգացման բիզնես պլանը: Նախագիծը ներկայացնելու ենք նաեւ համառուսաստանյան երկաթուղու ընկերության մեծ խորհրդում», ասաց Շայդուլինը: Վերոնշյալ նախագծերի շարքում է նաեւ «Ֆիդլետսովո» հսկիչ կետի կազմակերպումը, հաշվի առնելով, որ սահմանի բացման դեպքում փոխադրությունը կակտիվանա նաեւ Իջեւանի ուղղությունը:**

**Մի շարք նախագծեր արդեն ներկայացվել են ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի եւ «Ռուսաստանյան երկաթուղի» ընկերության տնօրեն Վլադիմիր Յակունինի ուշադրությանը: «Կարծում եմ, որ մինչեւ տարեվերջ կսկսենք բուն նախագծի իրականացումը. Ախուրյանի կայարանում արդեն սկսվել են համապատասխան աշխատանքներ` ենթակառուցվածքները նախապատրաստելու ուղղությամբ», ասաց նա:**

**Նա նաեւ հավելեց, որ մոտ ժամանակներում կձեւավորվի կազմակերպություն, որը կզբաղվի Իրան-Հայաստան երկաթուղու կառուցման աշխատանքներով: Իրենք ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությունից եւ «Ռուսաստանյան երկաթուղի» ընկերությունից ստացել են համապատասխան հանձնարարություններ երկաթուղու տեխնիկատնտեսական հիմնավորման վերաբերյալ:**

**Հունիսի 12-ին Հայաստան կժամանի «Ռուսաստանյան երկաթուղի» ընկերության տնօրեն Վլադիմիր Յակունինը: Այցի շրջանակներում նախատեսված է Երեւան-Մասիս երկաթուղային հատվածի դիտումը, որի ժամանակ կներկայացվի նաեւ նոր կայարանների ձեւափոխված համակարգը:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Բռնության սպառնալիքով ենթարկել են սեռական շահագործման

**Մարդկանց առեւտուրը կամ սեռական շահագործումը անգամ տնտեսական ճգնաժամի ընթացքում նվազման միտումներ չի արձանագրում, փոխարենը` կրկին աճում է բռնության սպառնալիքով սեռական շահագործման ենթարկվածների թիվը: Օրերս բացահայտվել է եւս մեկ խումբ, որը երիտասարդ աղջիկների է հավաքագրել` պոռնկության մեջ ներգրավելու նպատակով, Թուրքիայի Տրապիզոն քաղաքում, սպառնալիքով ենթարկել է սեռական շահագործման: Այդ թրաֆիկինգի «զոհերը» խոստովանել են, որ 2008-ի սեպտեմբեր ամսին 35 տ. Հասմիկ Ք.-ն 30 տ. Արուսյակ Ս.-ի միջոցով հավաքագրել եւ 42 տ. Գոհար Կ.-ի (հետախուզվում է ՀՀ քրեական օրենսգրքի 132,1 հոդվածի մեղադրանքով) մոտ` Թուրքիա է ուղարկել 33 տարեկան Եսթեր Մ.-ին եւ 21 տ. Ալլա Ս.-ին, որոնք էլ Գոհար Կ.-ի ստիպմամբ ենթարկվել են սեռական շահագործման:**

**Դեպքի հետ կապված նախապատրաստված նյութերն ուղարկվել են ոստիկանության քննչական գլխավոր վարչություն:**

**Մ. Ս.**

# Քաղաքապետարանը արձագանքեց «Ազգի» հրապարակմանը

Օրեր առաջ «**Ազգը**» տպագրել էր նկարչուհի Արեւիկ Պետրոսյանի «Բաց նամակ հարգարժան քաղաքապետի պաշտոնի հավակնորդներին եւ երեւանցիներին» վերտառությամբ հոդվածը, որով իր զայրույթն ու զարմանքն էր արտահայտել, երբ Երեւանի գլխավոր պողոտաներում նկատել էր մեծածավալ գովազդային վահանակներ, որոնք գովազդում են Թուրքիան:

Հոդվածին արձագանքում էին նաեւ մեր համաքաղաքացիները ու հորդորում դրանք անհապաղ վերացնել: Եվ ահա քաղաքապետարանը արագ արձագանքեց ու հանեց բոլոր 5 պաստառները:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Հայոց առնչված արաբերեն հրատարակություններն իրար հաջորդում են Եգիպտոսում

Եգիպտոսում ՀՀ դեսպանության, Կահիրեի ՀԲԸՄ մասնաճյուղի ղեկավարության, նրա տրամադրության տակ գտնվող «Սաթենիկ Ճ. Չագըր» հիմնադրամի եւ ընդամենը մեկուկես տարի առաջ հիմնված՝ Կահիրեի համալսարանի բանասիրության ֆակուլտետի հայկական հետազոտությունների կենտրոնի (ԿՀ ԲՖ ՀՀԿ) համագործակցությունը տալիս է իր փայլուն արդյունքները: Ընդամենը մի քանի ամսվա ընթացքում Կահիրեում լույս են տեսել հետեւյալ ուշագրավ հրատարակությունները.

- Եգիպտոսում ՀՀ դեսպանության մամուլի գրասենյակը փետրվարին թողարկել է դեսպանության «Ախբար Արմինիա» («Հայաստանի լուրեր») տարբերակը՝ Ա-4 չափի 4 էջ (0.5 տպ. մամուլ) ծավալով: Պարբերականի առաջին համարն ունի երկու ներդիր հավելված՝ յուրաքանչյուրը նույն չափի 2 էջ ծավալով. առաջինը ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի զրույցն է արաբական աշխարհում մեծ կշիռ ունեցող եգիպտական մեծագույն օրաթերթի՝ «Ալ Ահրամի» հետ, երկրորդը խորագրված է՝ «Հակիրճ տվյալներ Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին»: Համարի նյութերը վերաբերում են փետրվարի վերջին օրերին Էդ. Նալբանդյանի Եգիպտոս, Սիրիա եւ Լիբանան կատարած պաշտոնական այցերին: Տպագրությունը գունավոր է (հրատարակչի ուշադրությանն ենք հանձնում, որ ՀՀ պետական զինանշանում առյուծների հետնաբեմի գույնը պետք է լինի կարմիր, արծիվներինը՝ կապույտ եւ ոչ թե ընդհակառակը):



- Կահիրեի համալսարանի բանասիրության ֆակուլտետի հայկական հետազոտությունների կենտրոնը հրատարակել է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, երկար տարիներ ՀՀ ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտի տնօրեն Նիկոլայ Հովհաննիսյանի «Հայ-արաբական պատմական հարաբերությունները» ուսումնասիրությունը: Վերջինս հեղինակի՝ հիշյալ կենտրոնի բացման հանդիսության ժամանակ ընթերցած դասախոսությունն է: Ա-5 չափի 52 էջ, տպարան «Նուպար», Կահիրե, 2008: Գրքույկի «Մուտքը» հեղինակել է Կահիրեի համալսարանի բանասիրության ֆակուլտետի դեկան, գիտությունների դոկտոր Ահմեդ Զայեդը, իսկ «Ներածությունը»՝ Եգիպտոսում ՀՀ դեսպան, պատմական գիտությունների թեկնածու (այժմ՝ դոկտոր) Ռուբեն Կարապետյանը: Բուն ուսումնասիրությունը գրավում է գրքույկի 7-47-րդ էջերը, որոնց հաջորդում են հեղինակի կենսագրությունը, գիտական հետաքրքրությունների թեմաները եւ հրատարակված մենագրությունների մի ցանկը: Ուսումնասիրության մեջ հակիրճ ներկայացվում է հայ-արաբական հարաբերությունների պատմությունը Տիգրան Մեծի օրերից մինչեւ մեր օրերը, շեշտվում, թե այդ հարաբերությունները կրել են հիմնականում բարեկամական բնույթ (հասկանալի պատճառներով, հեղինակը միայն հարեւանցիորեն է անդրադարձել Հայաստանի արաբական գրավման դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարին 7-10-րդ դարերում եւ Կիլիկիայի հայկական պետության ժամանակ հայ-եգիպտական (մեմլուքյան) պատերազմներին):

- ԳՀ ԲՖ ՀՀԿ-ի առաջին հրատարակությունն է Կահիրեի հայերեն «Արեւ» թերթի նույնանուն արաբերեն ամսական հավելվածի խմբագիր, երիտասարդ հայագետ, պատմական գիտությունների թեկնածու Մուհամմեդ Ռիֆաթ ալ Իմամի «Հայերը, Արեւմուտքը եւ իսլամը. ոճրագործներ, զոհեր եւ ամբաստանյալներ» խորագրված հատորը: Ա-5 չափի 164 էջ, տպարան «Նուպար», Կահիրե, 2008: Հեղինակն իր այս մենագրությունը նվիրել է իր կնոջը՝ «այս աշխարհի եւ անդենականի հուրիին» (էջ 3): «Մուտքի» հեղինակն է հրատարակիչ կենտրոնի տնօրեն, գիտությունների դոկտոր Զեյնաբ Աբու Սիննան: Տպված եւ անտիպ արխիվային փաստաթղթերի, տարբեր լեզուներով մենագրությունների, բազմաթիվ երկրների պարբերական մամուլի չափազանց հարուստ աղբյուրային հիմքի վրա հեղինակը ներկայացնում, քննարկում եւ վերլուծում է 1890-ականների հայկական ջարդերի մեջ կրոնական գործոնի շահագործումը թե՛ հայերի, թե՛ թուրքերի եւ թե՛ մանավանդ Արեւմուտքի տերությունների կողմից, ինչի հետեւանքով՝ հայ-թուրքական ազգամիջյան հակամարտությունը հաճախ ներկայացվում էր որպես կրոնական հակամարտություն քրիստոնյաների եւ մուսուլմանների միջեւ: Հեղինակն ամեն կերպ աշխատում է իբրեւ կրոն իսլամը անմեղսակից ներկայացնել հայոց նկատմամբ սուլթան Աբդուլ Համիդի եւ նրա ձեռքին գործիք դարձած մոլեռանդ մուսուլմանների գազանություններից՝ իր այս սեւեռուն գաղափարին ծառայեցնելով այնպիսի դատողություններ ու եզրահանգումներ, որոնք մոտենում, երբեմն էլ համընկնում են թուրքական կեղծ պատմագիտության տեսակետներին: Օրինակ, ըստ ալ Իմամի, «Օսմանյան պետությունը տարբեր դավանանքների եւ ցեղերի հանդուրժողական գոյակցության վարչական տիպարի օրինակ է տվել» (էջ 133), իբր հայերը բռնի կրոնափոխության չեն պարտադրվել, քանի որ իսլամը մերժում է բռնությամբ կրոնափոխությունը եւ այլն (հեղինակը բացառություն է համարում քրիստոնյա ընտանիքներից արու երեխաների բռնախլումը՝ դեւշիրմեն, էջ 139): Մեր համոզմամբ, հեղինակը կրոնական հարցում արաբների հանդուրժողականությունը անհիմն կերպով տարածել է թուրքերի վրա՝ նսեմացնելով իր ուսումնասիրության հիրավի բարձր գիտական մակարդակը: Ալ Իմամը պետք է խուսափեր այս մոտեցումից: Այդուհանդերձ, մենագրությունը գիտական ուշագրավ հավելում է հայոց պատմության, մասնավորաբար Հայոց ցեղասպանության վերաբերյալ արաբերեն գրադարանի մեջ:

- ԳՀ ԲՖ ՀՀԿ-ի հաջորդ հրատարակությունը 2008-ի ապրիլի 29-ին այս կենտրոնում կայացած գիտաժողովում ինչած զեկուցումներն ընդգրկող «Արաբ-հայկական հարաբերությունները. անցյալը եւ ներկան» խորագրով ժողովածուն է: 17.5 x 24 սմ. չափի 186 էջ, Կահիրե, 2009, տպարան «Նուպար», հովանավոր՝ Կահիրեի ՀԲԸՄ: Խմբագիրն է Մուհամմեդ Ռիֆաթ ալ Իմամը: Նա նաեւ ներածականի հեղինակն է (բովանդակության ցանկում սխալմամբ տպագրվել է դեսպան Ռուբեն Կարապետյանի անունը, էջ 185): Ներածականում նա հայտնում է, թե գիտաժողովին զեկուցումներով մասնակցել են ուսումնասիրողներ եւ գիտնականներ Եգիպտոսից, ՀՀ-ից, Սիրիայից եւ Լիբանանից, որոնց զեկուցումները հիմնականում կենտրոնացել են երկու առանցքների շուրջը՝ ա. հայ-արաբական հարաբերությունները՝ հատկապես միջին եւ նոր դարերում, բ. արաբական աշխարհի, մասնավորաբար Եգիպտոսի, Երուսաղեմի, Սիրիայի ու Լիբանանի հայկական գաղթօջախների դերը: 16 զեկուցողներից տասը արաբներ են, վեցը՝ հայեր: Զեկուցումները վերաբերում են Հայաստանի արաբերեն վիմագրություններին, հայոց պատմության, հայ գրականության, Հայ եկեղեցու պատմության, բարձրագույն կրթության եւ հարակից բնագավառներում հայ-արաբական առնչություններին:

«Արաբ-հայկական հարաբերությունները. անցյալը եւ ներկան» ժողովածուն կարեւոր եւ շնորհակալ ներդրում է արաբական հայագիտության եւ հայ-արաբական գիտական գործակցության ասպարեզում:

ԳԵՎՈՐԳ ՅԱԶԸՃՅԱՆ

# Մարդը բանտում է, որովհետեւ հայ է

*1-ին էջից*

**- Ինչպիսի՞ն է ձեր գնահատմամբ իրավիճակը՝ ձեզ որպես Չախալյանի փաստաբանի չգրանցելու որոշումը բողոքարկելու հայցի առնչությամբ, եւ ինչպե՞ս կգնահատեք իրավիճակը Չախալյանի գործի առումով:**

- Իմ հայցի առնչությամբ պիտի ասեմ, որ վրացիներն անընդհատ հետաձգում են, որովհետեւ մենք դատի ենք տվել մերժելու իրենց մերժումը: Դա ինձ առանձնապես չի նեղացնում, քանի որ դա եւս ապացուցում է, որ պաշտպանության օրենքը խախտվում է Վրաստանում: Ինչ վերաբերում է Վահագն Չախալյանի գործի ներկա վիճակին, ապա պարզ է. մի մարդ կա, որ հայտնվել է բանտում, որովհետեւ հայ է: Սա եւ ինձ թույլ եմ տալիս ասել, քանի որ Չախալյանի դեմ ապացուցված համարված երկու մեղադրանքները վրացական դատարանում միայն արդյունք են վրացական արդարադատության՝ իր վրա շատ իրավունքներ վերցնելու: Դատական գործընթացում խախտումները բազմաթիվ էին, վկաներին լսելու, փորձաքննությունների, պաշտպանության իրավունքի գծով խախտումներ եւ այլն: Հետաքննություն ընդհանրապես տեղի չունեցավ, այսինքն՝ գրեթե բոլոր գործընթացներում խախտումներ տեղի ունեցան:

**- Արդյոք հույս ունե՞ք, որ կհասնեք արդարության, կդառնաք Չախալյանի պաշտպանն ու կներգրավվեք արդեն վերաքննիչ դատարան ներկայացված բողոքի քննությանը:**

- Իմ տպավորությամբ, վերջ ի վերջո վրացական իշխանությունները կզիջեն ու կտան այդ հնարավորությունը, բայց դա ինձ համար երկրորդական խնդիր է, քանի որ հարցը ոչ միայն ինձ հետ է կապված, ոչ էլ Վահագն Չախալյանի դատի: Հարցը ընդհանուր բնույթ ունի, դա Վրաստանում հայերի իրավունքների խնդիրն է: Խնդիրը շատ ավելի գլոբալ է: Իմ պարագայում Վրաստանը վախենում է իմ միջոցով դրսից տեսնել իր պատկերը: Այսինքն՝ իմ ներգրավումը դատական գործընթացում ընդամենը բացահայտում էր մի երեւույթ, որ արտերկրում սկսեցին տեսնել Վրաստանի առնչությամբ:

**- Ի՞նչ նկատի ունեք:**

- Խորհրդային Միության փլուզումից հետո Վրաստանը ընտրել է շատ ծայրահեղ ազգայնական ճանապարհ: Փոքրամասնությունների հանդեպ Վրաստանի սահմանած քաղաքականությունը փոքրամասնություններին երկրից դուրս քշելու ուղղությունն է, փոքրամասնությունները որեւէ իրավունք չունեն Վրաստանում: 1990-ականներին Վրաստանում կար փոքրամասնությունների մոտ 1,8 մլն ներկայացուցիչ: Այսօր այդ թիվը հազիվ թե հասնի 1 մլնի: Ինչ վերաբերում է հայերին, ապա ավելի քան 500 հզ. հայերից Վրաստանում հազիվ մնացել է 250-300 հազարը: Սա ապացուցում է Վրաստանում փոքրամասնությունների վերացման հեռանկարային կանխամտածված գործընթացի՝ շեշտադրված ավելի շատ հայության հանդեպ, քանի որ կարեւորագույններից է ու կազմակերպվածներից: Ադրբեջանը հարձակվեց իր հայ փոքրամասնության վրա, իսկ Վրաստանում իրավիճակն ավելի վտանգավոր է, քանի որ ակտիվ հարձակողական գործողություններ չեն իրականացվում, բայց հայ փոքրամասնությունը զրկվում է իր իրավունքներից: Սա ազգայնական ժխտողական քաղաքականություն է, որ վտանգավոր է նաեւ Վրաստանի համար, քանի որ այդպես թուլանում է հենց վրացական երկիրը: Թուրքերը արեցին նույնը, պարզապես ավելի բիրտ տարբերակով, գործընթացը նույնն է:

**- Ի՞նչ աղբյուրների վրա եք հենվում՝ անելու նման եզրակացություններ Վրաստանի առնչությամբ:**

- Ավելի քան քսան տարի Փարիզում աշխատում եմ Կովկասի տարբեր երկրներից քաղաքական ապաստանյալների գործով: Իմ աղբյուրներից գլխավորը Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան է, որ Վրաստանի փոքրամասնությունների գծով աշխատում է բազմաթիվ տարիներ: Բացի այդ, ռասիզմի եւ անհանդուրժողականության Եվրոհանձնաժողովի զեկույցների եւ ուսումնասիրությունների վրա եմ հիմնվում, որոնք աշխատում են տեղում եւ տալիս են երկրներին առաջարկություններ անելու բարեփոխումներ, որոնք, մասնավորապես, Վրաստանում չեն կատարվում: Ես նաեւ հիմնվում եմ ժողովրդագրական պաշտոնական տվյալների, հայկական գիտական ու մասնագիտական շրջանակների հայտարարած տվյալների վրա:

**- Այսինքն՝ տվյալ դեպքում Չախալյանի գործը դիտարկում եք որպես ընդհանրապես փոքրամասնությունների իրավունքների ոտնահարման օրինա՞կ, այլ ոչ զուտ քրեական գործ:**

- Անշուշտ: Վրաստանի իշխանությունները, չգիտես ինչու, կամ երեւի վախենալով Աբխազիայի եւ Հարավային Օսիայի փորձերից, մտածում են, որ ժամանակն է հայերին մեկուսացնելու եւ զսպելու: Չախալյանի պարագան այս համատեքստում եմ դիտում: Մյուս կողմից, Վրաստանը պետք է «տուրք» վճարի այն մեծ պայմանագրերի համար, որ ստորագրել է Թուրքիայի ու Ադրբեջանի հետ, ու այդ պայմանագրերի առումով հայության իրավունքները շատ ավելի «թեթեւ» են կշռում:

**- Արդյոք նախատեսվու՞մ է, որ Չախալյանի գործի քննությունը կարող է չավարտվել վրացական դատական ատյաններով, այլ շարունակվել մինչեւ եվրոպական դատարան՝ դառնալով եվրոպական իրավապաշտպան կառույցների հետաքրքրության առարկա:**

- Արդեն իսկ ուշադրության կենտրոնում է: Իմ մասնակցությունն այս դատավարությանն ամենից առաջ մեկ կարեւոր արդյունք ունեցավ: Դա այն է, որ ֆրանսահայությունն ու Եվրոպայի հայությունը, նաեւ ԱՄՆ-ում սկսեցին գիտակցել, որ կա ջավախահայության խնդիր, բացի նրանից, որ կա նաեւ Չախալյանի խնդիր: Տեղի ունեցավ ցույց Շվեյցարիայում, հանդիպում այդ երկրում Վրաստանի դեսպանի հետ: Չախալյանի դատավարությունից հետո նաեւ միջազգային որոշ կառույցներ սկսեցին հետաքրքրվել ու դատապարտել Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու կողմից փոքրամասնությունների նկատմամբ կատարված ոտնձգությունները: Օրինակ՝ Մարդու իրավունքների միջազգային ֆեդերացիան: Որպես այդ ֆեդերացիայի հայտարարության արդյունք՝ հիմա աշխատում ենք «Ամնիստի Ինտերնեյշնըլ» կազմակերպության հետ, որպեսզի նրանք եւս իրենց վերաբերմունքն արտահայտեն: Խնդրին ավելի գլոբալ նայելով տեսնում ենք, որ Վրաստանն այսօր միջազգային հանրությանը չի կարողանում ներկայանալ որպես ագրեսիայի ենթարկված պետություն: Միջազգային հանրությունը տեսնում է նաեւ, որ նա էլ իր հերթին իր երկրի ներսում մշակում է խնդրահարույց քաղաքականություն, որոնք տեղիք են տալիս ագրեսիայի:

**- Հավանակա՞ն եք համարում, որ վրացական արդարադատությունը կարող է ի վերջո արդարացնել Վահագն Չախալյանին:**

- Մենք հայ ենք, մենք երկար պայքարի սովոր ենք, ու բնական է, որ հարկ եղած դեպքում կհասնենք մինչեւ Եվրոպական դատարան: Բայց փոխվում են իշխանությունները: Չախալյանի գործում իմ պաշտպանությունը նաեւ քաղաքական բնույթ ունի, քանի որ Վրաստանում կարծեմ սա առաջին դեպքն է, որ օտարերկրացի փաստաբանը քաղաքական խնդրով ուզում է պաշտպանություն իրականացնել:

**- Դուք ավելի գլոբալ հարց եք բարձրացնում, քան կոնկրետ Չախալյանի դատավարությունն է: Արդյոք ծրագրվու՞մ է զբաղվել փոքրամասնությունների իրավունքներով ընդհանրապես:**

- Անշուշտ: Բնականաբար, պատրաստվում ենք այդ ուղղությամբ աշխատելու, բայց նկատի ենք առնում, որ Հայաստանում վրացական փոքրամասնություն չկա, իսկ Վրաստանում կա հայկական փոքրամասնություն, եւ երկու պետությունների հարաբերությունների խնդիր կա, որ շատ ավելի լայն է, քան մեր գործունեությունը: Մենք գիտակցում ենք, որ կա մի տարածություն, որտեղ մենք չպետք է մտնենք: Ի վերջո, մեր բոլորի նպատակը պետք է լինի, որ հայ եւ վրաց իշխանությունները փոխադարձ հարգանքով ու վստահությամբ համագործակցեն:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

AZG NEW 5.QXD 6/4/2009 10:47 PM Page 1



# Գերմանուհին բացահայտում է թուրքական կեղծիքը հրեաների վերաբերյալ

***Իր այս շաբաթվա սյունակում «Կալիֆոռնիա կուրիեր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր Հարութ Սասունյանը գրում է.***

Տարիներ շարունակ թուրքական կառավարությունն ու նրա վարձկան քարոզիչները պնդել են, թե հրեաներին լավ են վերաբերվել Թուրքիայում՝ պատմության ամբողջ ընթացքում:

Վերջին տարիներին, երբ հայերի ցեղասպանությունը ճանաչելու միջազգային ճնշումն ուժեղացավ Թուրքիայի վրա, թուրք պաշտոնյաներն իրենց երկրի հեղինակությունն էլ ավելի բարձրացնելու նպատակով ստիպեցին տեղի հրեական համայնքի ղեկավարներին հրապարակային հայտարարություններով հանդես գալ, որ իրենք հարյուրավոր տարիներ խաղաղ եւ բարգավաճ կյանք են վարել Թուրքիայում:

Թուրքիայի հրեա ղեկավարները կատարեցին թուրքական կառավարության թելադրանքը, որպեսզի ապահովեն իրենց համայնքի անվտանգությունը եւ պահպանեն իրենց անձնական գործարարական շահերը:

Իրականում հրեական համայնքի պատմությունը Օսմանյան կայսրությունում եւ հետագայում Թուրքիայի Հանրապետությունում շատ քիչ է ուսումնասիրված: Կորրի Գուտշտադ անունով մի գերմանացի գիտնական վերջերս այդ հարցը լրացնելու միտումով հրատարակել է 520 էջանոց համապարփակ մի ուսումնասիրություն, որտեղ ցույց է տրված Հոլոքոստի ժամանակահատվածում Թուրքիայի գործադրած դասապարտելի արարքները: «Թուրքիան, հրեաները եւ Հոլոքոստը» (Die Turkie, die Juden und der Holocaust) խորագրով գրքում հեղինակը եվրոպական մի շարք երկրների արխիվային նյութերի հիման վրա ներկայացրել է հրեաների տխուր ճակատագիրը Թուրքիայում:

Սոնյա Գալբերին տված հարցազրույցի ժամանակ (որը տեղադրված է www.Qantara.de կայքում) Գուտշտադը բացատրել է, թե ինչպես Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ 150 հազար հաշվող հրեական համայնքը նվազեց ներկայիս սոսկ 20 հազարի:

«Օսմանյան կայսրությունը որպես «բազմամշակութային դրախտ» ներկայացնելը անհեթեթություն է եւ հակապատմական: Որպես ոչ մահմեդականներ հրեաները ենթարկվում էին անթիվ-անհամար ճնշումների: Քրիստոնյաների նման նրանք էլ պարտավոր էին գլխահարկ վճարել եւ իրենց ստորադաս պահել մահմեդականներից», նշել է Գուտշտադը:

Հայերի ցեղասպանությանը ականատես լինելով, հրեաները սարսափում էին, որ իրենք էլ կարժանանան միեւնույն ճակատագրին: Որպեսզի ապահովեին իրենց անվտանգությունն ու գոյատեւումը, նրանք ամեն ջանք գործադրում էին (մինչեւ իսկ դավանափոխ լինելով ու մահմեդականություն ընդունելով), ապացուցելու, որ իրենք Թուրքիայի հավատարիմ հպատակներն են:

«Սկզբնական շրջանում հրեաներից շատերը իրենց քեմալիստական շարժման դաշնակիցներ էին համարում եւ նոր հանրապետության հաստատումը դրական ակնկալիքներով էին դիմավորում», ասել է Գուտշտադը եւ շարունակել. «Այդ ակնկալիքները, սակայն, շուտով հօդս ցնդեցին: Հակառակ համարվելու իրենց փորձերին եւ հավատարմության խոստումներին ու պատրաստակամությանը, նրանք դարձան թիրախը երիտասարդ հանրապետականների կոշտ ազգայնամոլության: Երիտթուրքերի քաղաքականության բնորոշ գծերից մեկն էր պետության, տնտեսության եւ հասարակության «թուրքացումը», որի հետեւանքով հրեաները մեկը մյուսի հետեւից դուրս մղվեցին մի շարք մասնագիտություններից եւ տնտեսական ոլորտից, շատ հրեաներ արտագաղթեցին (Թուրքիայից)»:

Երկու համաշխարհային պատերազմների միջեւ ընկած ժամանակահատվածում Թուրքիայի հրեաների եւ մյուս փոքրամասնությունների հանդեպ անհանդուրժողականությունը աճում էր: Ըստ Գուտշտադի, «Հակասեմական տրակտատները, ինչպիսին, օրինակ, «Սիոնի ուսյալ ավագների արձանագրությունները», Թուրքիա հասնելով անմիջապես թուրքերենի էին թարգմանվում 1930-ական թվերին: Թուրքիայում իսլամական հակասեմականության հայրը համարվող Ջեւաթ Ռիֆաթ Աթիլհանը Գերմանիա այցելությունից վերադառնալով Ստամբուլում սկսում է հրատարակել «Միլլի ինկիլապ» («Ազգային հեղափոխություն») հակասեմական թերթը, որտեղ տեղ են գտնում գերմանական «Դեր Շտյուրմեր» նացիստական թերթից արտատպված հակասեմական ծաղրանկարները: Մինչեւ օրս վերոնշյալ «Սիոնի ուսյալ ավագների արձանագրությունները» ու «Մայն քամպֆը» բազմաթիվ անգամներ են վերահրատարակվել Թուրքիայում:

Հրեաներին, քրդերին, հայերին եւ հույներին պարտադրված պատժամիջոցների շարքում էին բռնի տեղահանությունները, «ունեցվածքի հարկը», որը շատ անգամ բռնագանձմամբ եւ կալվածների առգրավմամբ էր ավարտվում, քանի որ մարդիկ ի վիճակի չէին մուծելու աստղաչափական գումարները, եւ պարտադրված աշխատանքը Արեւելյան Անատոլիայի ճամբարներում»:

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին մոտ 30 հազար հրեաներ Թուրքիայից Եվրոպա տեղափոխվեցին՝ փախչելու համար անարդար եւ հաճախ գազանային վերաբերմունքից, չիմանալով, որ այնտեղ իրենց սպասում է առավել ողբերգական ճակատագիր: 1942-ին նացիստական Գերմանիան Անկարայից պահանջեց հետ կանչել գերմանական Ռայխի գրաված տարածքներում գտնվող իր հրեա քաղաքացիներին: Անկարան մերժեց ընդունել նրանց եւ զրկեց նրանց թուրքական քաղաքացիությունից: Որպես հետեւանք Թուրքիայի հազարավոր հրեաներ բնաջնջվեցին գերմանական համակենտրոնացման ճամբարներում:

Գուտշտադը նաեւ փողազերծել է բազմիցս կրկնվող այն սուտը, թե իբր Թուրքիան եվրոպացի հրեաներից շատերին ապահով ապաստան է տվել Հոլոքոստի գործադրման ժամանակ: Նա նշել է, որ նույնիսկ եվրոպական երկրներում հավատարմագրված այն մի քանի թուրք հյուպատոսները, որոնք միջամտել են ազատելու թուրք հրեաներին, կատարել են այդ քայլը «ոչ թե մարդասիրական նպատակով, այլ իրենց գրպանները լցնելու մոլուցքով դրդված»:

Թուրքերի ստերը մերկացնող Կորրի Գուտշտադի այս գիրքը պետք է թարգմանվի եւ հրատարակվի մի շարք միջազգային լեզուներով, որպեսզի աշխարհն իրազեկ լինի Հոլոքոստի օրերին իր հրեա քաղաքացիների հանդեպ Թուրքիայի կառավարության ուղղեգրած ռասիստական եւ հանցագործ քաղաքականությանը:

***Թարգմ. Հ. Ծ.***

# Կայծակնահար օդանավը վայրէջք կատարեց Կալիֆոռնիայում

Ամերիկյան Southwest Airlines ավիաընկերության մարդատար օդանավերից մեկը երեկ Օքլենդ քաղաքի (Կալիֆոռնիայի նահանգ) օդանավակայանում վայրէջք է կատարել վերուլացքից քիչ անց կայծակնահար լինելուց հետո: Այդ մասին հաղորդում է CBS-5 հեռուստաընկերությունը:

Օդանավը 56 ուղեւորներով թռել էր Օքլենդի միջազգային օդանավակայանից դեպի Կալիֆոռնիայի Բերբանկ քաղաք: Վերուլացքից որոշ ժամանակ անց օդանավին կայծակ էր հարվածել: Այդ կապակցությամբ օդաչուն որոշել էր վերադառնալ մեկնակետ:

Օքլենդի օդանավակայանի մամլո ծառայությունում լրագրողներին ասել են, որ վայրէջքն իրականացվել է սովորական ռեժիմով, ուղեւորները չեն իմացել ծագած արտակարգ իրավիճակի մասին: Միջադեպի հետեւանքով որեւէ մեկը չի տուժել:



Օդանավն արդեն համապատասխան տեխնիկական ստուգումների է ենթարկվել: Լուրջ վնասվածքներ չեն հայտնաբերվել: Ակնկալվում է, որ օդանավը մոտ ժամանակներս կվերսկսի թռիչքները:

## ՀԱՄԱՌՈՏ

# Սաուդյան բարձրագույն շքանշան՝ Բարաք Օբամային

**Իր մերձավորարեւելյան ուղեւորության շրջանակներում Սաուդյան Արաբիա մեկնած ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման այդ երկրի Աբդուլլահ թագավորից ստացել է սաուդյան բարձրագույն շքանշան, որը կախված է զանգվածեղ ոսկե մանյակից: Օբամային նաեւ տարել են էքսկուրսիա: Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ նա այցելել է թագավորական ձիաբուծարան, որտեղ պահվում են նշանավոր արաբական նժույգներ:**



**Շքանշանն Օբամային հանձնելիս սաուդցի միապետը հայտարարել է. «Այսպիսի պարգեւ ստանում են թագավորի միայն որոշ բարեկամներ: Դուք, անկասկած, նրանցից մեկն եք»:**

**Օբաման երախտիք խոսք է ասել, բայց շքանշանը տեսնելուց հետո չի կարողացել թաքցնել հիացմունքը եւ զարմանքի բացականչություն է արել: Օբաման ոսկե մանյակով շքանշանը ի պահ է հանձնել օգնականներին:**

**Բարաք Օբամայի մերձավորարեւելյան ուղեւորությունը կոչված է ցուցադրելու, որ ԱՄՆ վարչակազմը բարյացակամ է իսլամական աշխարհի նկատմամբ, որի հետ հարաբերությունները լրջորեն տուժել էին նախկին նախագահ Բուշի օրոք:**

**Երկու պետությունների ղեկավարները այնուհետեւ անցկացրել են դռնփակ բանակցություններ: Ենթադրվում է, որ դրանց գլխավոր թեման եղել է պաղեստինա-իսրայելական հակամարտության կարգավորման հեռանկարը: Հունիսի 4-ին Օբաման իր մերձավորարեւելյան ուղեւորությունն ավարտել է Եգիպտոսում:**

# Գորդոն Բրաունի հրաժարականը մոտալուտ է

**Մեծ Բրիտանիայում եւ Հոլանդիայում հունիսի 4-ին սկսվեցին Եվրոխորհրդարանի ընտրությունները, որոնք հետագա օրերին անցկացվելու են Եվրոմիության մյուս 25 պետություններում եւս: Խորհրդարանի առաջին նիստը տեղի կունենա հուլիսի սկզբներին: Այս անգամ ընտրությունները չեն ոգեւորում եվրոպացիներին. սպասվում է, որ դրանց կմասնակցի ձայնի իրավունք ունեցողների մոտ 50 տոկոսը:**

**«Ֆիգարո» թերթը հաղորդում է, որ հենց ընտրությունների նախօրեին հրաժարական է տվել Մեծ Բրիտանիայի լեյբորիստական կուսակցության արդեն չորրորդ նախարարը, անչափ թուլացնելով վարչապետ Գորդոն Բրաունի դիրքերը: Թերթի բնորոշմամբ, վարչապետի պաշտոնում Բրաունին, ըստ երեւույթին, հաշված ժամեր են մնացել: Նա այլեւս անկարող է վերահսկել իր կառավարության անդամներին: Բրիտանական որոշ թերթեր հաղորդում են, որ խորհրդարանում Բրաունի հակառակորդները լեյբորիստ պատգամավորների շրջանում ստորագրահավաք են սկսել վարչապետի հրաժարականի պահանջով:**

**Հրաժարական տված վերջին՝ 4-րդ նախարարը տեղական համայնքների նախարար, 53-ամյա Հեզել Բլերսն է: «Դեյլի թելեգրաֆ» թերթը պարզել է, որ նա հանրային ֆոնդերն օգտագործել է անձնական նպատակներով: Բացի դրանից, վերջերս Մեծ Բրիտանիայի խորհրդարանում համանման ուրիշ դեպքեր էին բացահայտվել, առաջացնելով քաղաքական լուրջ սկանդալ:**

**Ասում են, թե ամենածանր պահին ինքնակամ հեռանալով՝ տիկին Բլերսը մտադրվել է կուսակցության առաջնորդի պաշտոնում փոխարինել Բրաունին:**

# Մահվան սպառնալիք՝ նոր ավանները քանդող հրեա գեներալին

**Իսրայելի գեներալ Գադի Շամնին նամակ է ստացել իր եւ ընտանիքի անդամների նկատմամբ հաշվեհարդարի սպառնալիքներով: Պաղեստինյան տարածքներում ստեղծված իսրայելական նոր ավանների բնակիչները գեներալին կասկածում են իրենց արտաքսմանը մասնակցելու մեջ, նշում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**Նամակում գեներալին «հրեատյաց» են անվանում եւ «սատանայի որդի»: Նամակագիրները սպառնում են հաշվեհարդար տեսնել նաեւ գեներալի զավակների հետ, որոնց նույնպես անվանում են «սատանայի որդիներ»:**

**Այսրհորդանանում Շամնին այն ստորաբաժանումների հրամանատարն է, որոնք հաճախ ներգրավվում են պաղեստինյան տարածքում հրեական անօրինական բնակավայրերի վերացման գործողություններում: Այդ գործողությունները արմատական հրեա վերաբնակիչների զայրույթն են հարուցում: Հունիսի 4-ին ոչնչացվեց ինը խարխուլ շինություններից բաղկացած հերթական բնակավայրը: Վերջին ամիսներին այդ բնակավայրը մի քանի անգամ քանդվել է, բայց վերաբնակիչները դարձյալ վերականգնել են իրենց կառույցները:**

**Այսրհորդանանում ներկայումս կա ընդամենը 100 հրեական անօրինական բնակավայր: Եվս 121 բնակավայր կառուցվել է Իսրայելի կառավարության թույլտվությամբ: Միջազգային ընկերակցությունը եւ առաջին հերթին ԱՄՆ վարչակազմը պահանջում են քանդել պաղեստինյան տարածքում կառուցված հրեական բոլոր ավանները:**

**Օրերս Վաշինգտոնում ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուից պահանջեց քանդել Այսրհորդանանում կառուցված նոր ավանները: Մայիսի 31-ին Իսրայելի կառավարությունը հրապարակեց մոտ ժամանակներս քանդվելիք անօրինական բնակավայրերի ցանկը:**

**Իսրայելի արմատական ուժերը ժողովրդին կոչ են անում չենթարկվել «Վաշինգտոնի թելադրանքին»: Վարչապետ Նաթանյահուն հայտարարել է, որ նոր ավանները քանդելու որոշումը կապված չէ ԱՄՆ-ի պահանջների հետ, ավելացնելով, որ իսրայելցիները նոր բնակավայրեր չեն կառուցելու:**

**Պաշտպանության նախարար Բարաքը շինությունների քանդումը դադարեցնելու վերաբնակների խնդրանքին ի պատասխան ասել է, որ ինքը հանդես է գալիս նոր ավանները բնակիչների հետ բանակցությունների միջոցով վերացնելու օգտին: Սակայն նա մանրամասնել է. «Եթե բանակցությունները դառնան անհնար, ապա մենք արագորեն եւ ագրեսիվորեն կգործենք հանուն օրինականության հաստատման»:**

# Ավետիսներ «Էրեբունի» թանգարանից

Համատարած դժգոհության ու բողոքների համապատկերում մեծապես տարբերվում են այն հաստատությունները ու անձինք, որոնք չեն ընկրկում դժվարություններից ու առանց հուսահատության անում են կարողացածն ու հնարավորություններ փնտրում ավելին իրականացնելու գործունեության իրենց ոլորտում: Այդ սկզբունքով է աշխատում «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի ղեկավարությունն ու աշխատակազմը եւ հերթական անգամ նոր ձեռնարկումներով հանդես գալիս:

## Պաշտոնապես հստակեցվել են «Շենգավիթ» եւ «Կարմիր բլուր» հնագիտական թանգարանների տարածքները

Երկարատեւ ու հետեւողական աշխատանքից հետո հաստատվել են «Շենգավիթ» եւ «Կարմիր բլուր» պատմահնագիտական թանգարան-արգելոցների տարածքային սահմանները եւ արդեն համապատասխան եռակնիք փաստաթղթերը գտնվում են թանգարանների ղեկավարության ձեռքին: Փետրվարի 5-ին «Շենգավիթի», մարտի 10-ին «Կարմիր բլուրի» տարածքներն են հաստատվել: Առաջինի տարածքը կազմում է 5,95 հա, որից 3,2 հեկտարը հուշարձանի բուն տարածքն է, երկրորդինը՝ 39,7 հա է (ամբողջը հուշարձան է): Այս տեղեկությունները տրամադրեց «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տնօրեն Աշոտ Փիլիպոսյանն ու հավելեց. «Յուրաքանչյուր հնագիտական հուշարձանի մասին տասնյակ, հարյուրավոր գրքեր կարող են գրվել ու գրվում են: Էրեբունու մասին երկու տասնյակից ավելի աշխատություն կա գրված, վերջինը՝ 25 տարվա հնության եւ արդեն թերի: Մինչդեռ հուշարձանը շատ ավելի երկարակյաց է եւ նոր ուսումնասիրությունների պատմական նյութ: Հենց սա էլ առավելագույն կարեւորություն է հաղորդում որեւէ հնագիտական հուշարձանի տարածքների հստակեցման ու պահպանման գործին»:



Շարունակում է առկախ մնալ «Շենգավիթ» թանգարանի շենքային խնդրի լուծումը: Ներկայում թանգարանը տեղակայված է հնավայրում հնագիտական պեղումներ կատարած արշավախմբի փայտե աշխատանքային տնակում, որը ոչ մի տեսանկյունից չի համապատասխանում թանգարանային պահանջներին: Սակայն թանգարանը շուտով կսկսի գործել՝ պատրաստ է ցուցադրությունը, որը կազմվել է տարբեր թանգարաններում պահվող Շենգավիթից հայտնաբերված հնագիտական նյութի ներառմամբ:

«Խնդիրը կարող է իր ժամանակավոր լուծումը ստանալ, եթե պետական մարմինները համաձայնեն թանգարանին տրամադրել Հրազդանահայաց կողմում գտնվող էլցանցերին պատկանած, ներկայում լքյալ երկու քարե փոքր շենքերը, որոնցից մեկը կծառայի որպես պահոց, մյուսում՝ կլինի ցուցադրությունը», ասաց Աշոտ Փիլիպոսյանը:

## Պատրաստ է 10 հազար լուսանկար՝ ուրարտական ժամանակաշրջանի ալբոմ-կատալոգների համար

«**Ազգը**» ժամանակ առաջ տեղեկացրել էր իր ընթերցողներին, որ երկու թանգարաններ՝ «Էրեբունին» (Երեւան) եւ «Էրմիտաժը» (Սանկտ Պետերբուրգ) նախորդ տարի՝ 2008 թվականին նախաձեռնել են Եվրոպայի թանգարաններում պահվող ուրարտական ժամանակաշրջանի ցուցանմուշների ալբոմ-կատալոգի ստեղծումը: Ի հավելումն ներկայացված տեղեկատվության ասենք, որ աշխատանքները մեկնարկել են այս տարի եւ արդեն երեք ամիս է, ինչ երկու կողմերի մասնագետները ճշգրտում են չափանիշներն ու հասցրել են տպագրության պատրաստել 10 հազար լուսանկար:

Սակայն, ինչպես հավաստեց «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տնօրեն Աշոտ Փիլիպոսյանը. «Հնարավորինս ամբողջական ալբոմներ կազմելու համար դեռեւս բավական աշխատանք կա կատարելիք եւ հրատարակումը ավելի շուտ, քան երկու տարուց՝ չի լինի»:

Ըստ նախորդ տարի ձեռք բերված համաձայնության, հրատարակման ծախսերի մի մասն իր վրա է վերցրել ռուսական կողմը, հետեւաբար, հայկական կողմին կտրվի տպաքանակի 50 տոկոսը:

## Վերականգնման դասընթացներ՝ իտալացի մասնագետների մասնակցությամբ

Միացյալ Նահանգների Հայկական միացյալ հիմնադրամի ֆինանսավորմամբ, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի աջակցությամբ եւ իտալահայ ճարտարապետ Գայանե Կազնաշիի ջանքերով Իտալիայից ձեռք է բերվել որմնանկարչության համար նախատեսված 11 տոննա ներկ ու տրամադրվել «Էրեբունի» թանգարանին, որի տնօրեն Աշոտ Փիլիպոսյանի հավաստմամբ. «Հայաստանին անհրաժեշտ այդ ներկերի ձեռքբերումն ինքնանպատակ չէ՝ քիչ չեն վերականգնման օրհասական անհրաժեշտություն ունեցող արժեքավոր որմնանկարները, որոնց թվում եւ Մինասի հեղինակածը: Ի դեպ արդեն իսկ պայմանավորվածություն կա նաեւ թանգարանի ղեկավարության հետ անհրաժեշտ ներկերը տրամադրելու մասին»:

Նախնական պայմանավորվածություն կա նաեւ վերականգնող մասնագետների համար իտալացի մասնագետների մասնակցությամբ Հայաստանում «Էրեբունի» թանգարանի հետ դասընթացներ կազմակերպելու մասին:

**ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# «Գերմանական շաբաթները» Գյումրիում եւ Ծաղկաձորում

**Տարեսկզբից Հայաստանում անցկացվում են Գերմանիայի շաբաթներ, որոնք ներառում են մշակութային զանազան միջոցառումներ: Հերթականը տեղի կունենա հունիսի 5-ին՝ Ծաղկաձորում Գրողների միության հանգստյան տանը կբացվի ծաղրանկարների քառօրյա ցուցահանդես: Այն հնարավորություն է գերմանական նոր լրագրային կոմիքսների միջոցով գերմանական պատկերապատումներին ծանոթանալու հնարավորություն է: Ցուցահանդեսը, ինչպես եւ Գերմանական շաբաթների բոլոր մյուս միջոցառումները, կազմակերպվել են Հայաստանում Գերմանիայի դեսպանությունն ու ՀՀ մշակույթի նախարարությունը: Նույն ցուցահանդեսը հունիսի 10-ից 4 օր դիտելու հնարավորություն կունենան գյումրեցիները, իսկ հունիսի 9-ին՝ «Frankfurter Allgemeine Zeitung» թերթի խմբագիր ու պատկերապատումների լավագույն գերմանացի մասնագետներից մեկը՝ Անդրեաս Պլատհաուսը, երեւանաբնակ գերմանացի գրող Մարկ Դեգենսի հետ պարզաբանումներ կտա կոմիքսներին վերաբերող որոշ հետաքրքրական հարցեր, օրինակ, թե արդյոք գերմանացիներն են կոմիքսները հնարել,**




**արդյոք պետք է կոմիքսները թանգարաններում ցուցադրվեն եւ այլն: Զրույցն անցկացվելու է համընթաց հայերեն թարգմանությամբ:**

**Բացի թվարկվածներից, նույն օրը՝ հունիսի 5-ին Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանում տեղի կունենա եւս մի միջոցառում. հայ երեխաների հեղինակած «Արեւի հետքերով» գրքի գերմաներեն թարգմանության շնորհանդեսը: Գիրքը հրատարակվել է Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից՝ ՎիվաՍԵԼ-ՄՏՍ-ի աջակցությամբ: Իսկ գրքի գերմաներեն թարգմանությունը հնարավոր է դարձել Գերմանիայի դեսպանության շնորհիվ:**

**«Արեւի հետքերով» գիրքը բնությանը նվիրված հեքիաթների ժողովածու է: Բոլոր պատմությունների եւ նկարազարդումների հեղինակները հայ երեխաներն են: «Արեւի հետքերով» գիրքը կազմել են «Արեւորդի» էկո-ակումբի երիտասարդ անդամները՝ Հայաստանում վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի եւ ՎիվաՍել ՄՏՍ-ի կազմակերպած բնապահպանական կրթական ծրագրի շրջանակներում:**

**Ն. Պ.**

ԸՍՏ ԱՐԺԱՆՎՈՒՅՆ

# Ժիրայր Դանիելյանի մեծարման հանդիսություն Կամերային երաժշտության տանը

**Չորեքշաբթի հետմիջօրեին, Երեւանի կամերային երաժշտության տանը տեղի ունեցավ լիբանանահայ բազմավաստակ բանասեր, խմբագիր հասարակական եւ կրթական գործիչ Ժիրայր Դանիելյանի մեծարման գերեկույթը: Միջոցառումը համատեղ կազմակերպել էին ՀՀ սփյուռքի եւ մշակույթի նախարարությունները եւ Հայաստանի գրողների միությունը: Դահլիճը լիքն էր գիտության, մշակույթի եւ արվեստի գործիչներով, ուսանողներով եւ հոգեւոր արժեքներով սնվող բազմությամբ:**

**Ավելի քան երկու ժամ տեւած հանդիսությունը վերածվեց հայրենիք-սփյուռք հոգեհարազատության փառատոնի: Ելույթներ ունեցան ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը, սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, մշակույթի փոխնախարար Դավիթ Մուրադյանը, բեմադրիչ Երվանդ Ղազանչյանը, գրականագետներ Յուրի Խաչատրյանը, Սուրեն Դանիելյանը, Սամվել Մուրադյանը, Ազատ Եղիազարյանը եւ ուրիշներ, որոնք մեծարյալին շնորհեցին մեդալներ, պատվոգրեր, իրենց կազմած գրքերից, եւ ամենակարեւորը՝ իրենց խոր սերն ու հարգանքը Ժիրայր Դանիելյան անձ-երեւույթի նկատմամբ:**

**Կարեն Միրզոյանի հանդիսավարած գերեկույթին հասուկ փայլ ավելացրին երեւանցի եւ գյումրեցի արվեստագետներն իրենց գեղազանց կատարումներով: Հնչեցին ասմունք (Լալա Մնացականյան՝ Դերենիկ Դեմիրճյանի «Հայը»), երգ, նվագ, եղան թատերական կատակ-ներկայացումներ եւ այլն:**

**Ամենավերջում բեմ բարձրացավ մեծարյալը: Նա խոստովանեց, որ «Կռունկ» երգը արցունքներ է հոսեցրել իրենից: «Այսօր իմ կյանքի ամենաերջանիկ օրն է», հայտարարեց նա, հավելելով, թե ինքը հարուստ է գրքերով, աշխարհասփյուռ բարեկամներով եւ պայծառանուն ուսուցիչներով, որոնք իր հետ «այս բեմին վրայ կը մեծարվին արժանավորապես»: Հայտնապես, Ժիրայր Դանիելյանը խորապես հուզված էր:**

**Տկն Հրանուշ Հակոբյանն իր ելույթում հայտնել էր, թե այսուհետեւ ՀՀ-ն պետական մակարդակով է մեծարելու սփյուռքահայ վաստակավոր գործիչներին: Այդ պատվին առաջինն արժանացավ Ժիրայր Դանիելյանը, որին էլ տկն Հակոբյանը շնորհեց իր ղեկավարած գերատեսչության առաջին պատվոգիրը:**

**ԳԵՎՈՐԳ ՅԱԶԸՃՅԱՆ**

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

# Նոր ապագայի ակնկալիքով

## Սարաջյանի անվան դպրոցի հաշվետու համերգը

Կոնստանտին Սարաջյանի անվան երաժշտական դպրոցը համարվում է հանրապետության լավագույն կրթօջախներից մեկը, որտեղ դեռահասներին սովորեցնում են առնչվել ու ընկալել արվեստը: Այս տարի դպրոցի սաներից շատերը մասնակցել եւ հաղթել են ոչ միայն հայաստանյան, այլեւ միջազգային մի շարք փառատոներում: Երաժշտությունից զատ դպրոցում գործում են նաեւ նկարչության եւ պարի խմբակներ, որոնց սաներն էլ հասել են հաջողությունների:

Արվեստի նկատմամբ երիտասարդության մեջ սեր արթնացնելու նպատակով դպրոցի տնօրենությունը մի շարք ծրագրեր է նախաձեռնել: Եթե նախորդ տարիներին երիտասարդները կարող էին մեկ ամիս անվճար պարապել՝ պարզելու, թե որ գործիքն է իրեն հոգեհարազատ, այժմ դպրոցի ուսուցիչները հանրակրթական դպրոցներում կազմակերպում են անվճար համերգներ ու բաց դասեր, որտեղ ներկայացնում են երաժշտության պատմություն:

«Հիմնական նպատակն է, որպեսզի երիտասարդների ու երաժշտության միջեւ կապը ամրանա: Եթե այդ կապն ամուր լինի, այլ հայացքով կնայեն իրենց շուրջը կատարվող փոփոխություններին ու հաստատ լավ մարդիկ կդառնան: Գիտակցությունը, որ արվեստի ուժը շատ մեծ դերակատարություն ունի, պետք է դարձնենք գերխնդիր», նկատում է դպրոցի տնօրեն Արմինե Պողոսյանը:

Այժմ դպրոցում երաժշտական կրթություն է ստանում 400 պատանի: Արմինե Պողոսյանը նկատում է, որ այս տարի դպրոցում պետպատվերի շրջանակներում դիմորդները բացի ժողգործիքներից անվճար սովորում են նաեւ թավջութակ:

Երեկ Առնո Բաբաջանյան համերգասրահում տեղի ունեցավ դպրոցի ավարտական հաշվետու համերգը: Ծրագրում հնչեցին Գրիգի, Կոմիտասի, Հայդնի, Առնո Բաբաջանյանի, Արամ Խաչատրյանի, Ռախմանինովի ստեղծագործությունները:



Մեկժամյա համերգային ծրագիրն ընթացավ լեփ-լեցուն դահլիճում, ջերմ մթնոլորտում, իսկ ծափահարությունները կատարած աշխատանքի լավագույն գնահատականն էր:

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Երիտասարդականը սկսում է ընտրական մրցաշարը

## Առաջին մրցակիցը Շվեյցարիայի հավաքականն է

Այսօր Շվեյցարիայի Վիլ քաղաքում դաշտի տերերի հետ հանդիպումով Հայաստանի երիտասարդական հավաքականը կսկսի 2011-ի Եվրոպայի երիտասարդական առաջնության ընտրական մրցաշարը: Խաղը կսկսվի Երեւանի ժամանակով 23-ին: Մեր ընտրանին այդ խաղի նախապատրաստությունը սկսել է հունիսի 1-ից՝ կարճատեւ ուսումնամարզական հավաք անցկացնելով Երեւանում: Հավաքականի գլխավոր մարզիչ Ֆլեմինգ Սերիցլեւը հավաքի էր հրավիրել 23 ֆուտբոլիստի, որոնցից 20-ը երեկ մեկնեցին Ցյուրիխ, որտեղից ուղեւորվեցին Վիլ: Հավաքի հրավիրված ֆուտբոլիստներից Ցյուրիխ չեն մեկնել Բելգիայի «Բրյուգեի» խաղացող Մասիս Ոսկանյանը, բելգիական «Ստանդարտի» կիսապաշտպան Հրաչ Յագանը եւ «Բանանցի» հարձակվող Հրանտ Գեւորգյանը:




Շվեյցարիայի երիտասարդական հավաքականն ընտրական նախորդ մրցաշարում իրեն գերազանց է դրսեւորել: Շվեյցարացիներն ընտրական 5-րդ խմբում հաղթող ճանաչվեցին՝ 8 խաղում վաստակելով 16 միավոր (+5=1-2, 16-5): Նույնքան միավոր էր վաստակել նաեւ Հոլանդիայի ընտրանին, սակայն շնորհիվ անձնական հանդիպումներում հասած առավելության շվեյցարացիները նվաճեցին անցումային խաղերի մասնակցության իրավունքը: Շվեյցարիայի հավաքականը միեւնույն 1-0 հաշվով երկու խաղերում էլ պարտության մատնեց հոլանդացիներին: Էստոնիայի հավաքականի նկատմամբ շվեյցարացիները խոշոր հաշվով հաղթանակներ տոնեցին (4-0, 5-0): Նորվեգացիների հետ խաղերում մրցակիցները մեկական հաղթանակ տոնեցին (1-2, 2-0), իսկ մակեդոնացիների հետ մրցավեճում վաստակեցին ընդամենը մեկ միավոր (1-1, 1-2):

Սակայն Շվեյցարիայի հավաքականին չհաջողվեց եզրափակիչ փուլի ուղեգիր նվաճել: Իսպանացիների հետ անցումային երկու հանդիպումների ընդհանուր արդյունքով (2-1, 1-3) շվեյցարացիները ուղեգիրը զիջեցին մրցակցին: Հայաստանի երիտասարդական հավաքականն ընտրական նախորդ մրցաշարում Թուրքիայի, Ուկրաինայի, Չեխիայի եւ Լիխտենշտեյնի հավաքականների հետ մրցավեճում խմբում գրավել էր նախավերջին՝ 4-րդ տեղը: Առաջին երկու հանդիպումներում (Լիխտենշտեյն՝ 1-0, Ուկրաինա՝ 0-4) մեր հավաքականը գլխավորում էր Սամվել Պետրոսյանը, հաջորդ 6 մրցախաղերն անցկացվեցին Վարուժան Սուքիասյանի գլխավորությամբ (Չեխիա՝ 1-1, 0-3), Ուկրաինա (0-2), Լիխտենշտեյն (4-1), Թուրքիա (2-1, 0-4):

Եվրոպայի երիտասարդական առաջնությունների ընտրական մրցաշարերում ՀՀ հավաքականի նորամուտը կայացել է 1994-ի սեպտեմբերի 6-ին բելգիական Գենկ քաղաքում: Մեր հավաքականը Հովհաննես Զանազանյանի գլխավորությամբ 0-7 հաշվով ջախջախիչ պարտություն կրեց: Արդեն 25-րդ րոպեին տուգանային հրապարակում խախտման համար մրցավարը դաշտից հեռացրեց դարպասապահ Ռոման Բերեզովսկուն եւ 11 մ հարված նշանակեց: Բերեզովսկուն փոխարինած Արմեն Հովհաննիսյանը ստիպված էր 7 անգամ գնդակը հանել ցանցից:

Հաջորդ խաղում՝ հոկտեմբերի 8-ին Աբովյանում մեր ֆուտբոլիստները բացեցին իրենց գոլերի հաշիվը: Աչքի ընկավ Տիգրան Առաքելյանը՝ գրավելով Կիպրոսի հավաքականի դարպասը: Իսկ 1995-ի մայիսի 10-ին, դարձյալ Աբովյանում, ՀՀ հավաքականն անդրանիկ հաղթանակը տոնեց՝ 2-0 հաշվով պարտության մատնելով Մակեդոնիայի ընտրանուն:

Այսօրվա խաղում Հայաստանի երիտասարդական հավաքականին ավագի թեւկապով խաղադաշտ դուրս կբերի 20-ամյա Հենրիխ Մխիթարյանը: Վերջինս երիտասարդական հավաքականի ներկա կազմից ամենափորձառուներից մեկն է: Մխիթարյանը երիտասարդական հավաքականում արդեն 8 խաղ է անցկացրել եւ խփել 2 գնդակ: Գոլերի հաշիվը նա բացել է 2007-ի նոյեմբերի 20-ին Լիխտենշտեյնի հավաքականի հետ արտագնա ընտրական մրցախաղում: Անշուշտ, Հենրիխի համար հիշարժան է անցյալ տարվա օգոստոսի 20-ին «Հրազդան» մարզադաշտում Թուրքիայի երիտասարդական հավաքականի հետ կայացած ընտրական խաղը, որում ավելացված ժամանակում նրա խփած գոլի շնորհիվ հայ ֆուտբոլիստները կամային հաղթանակ տոնեցին (2-1):

Հայաստանի եւ Շվեյցարիայի երիտասարդական հավաքականներն առաջին անգամ են հանդիպելու: Այսօրվա հանդիպումն ընտրական մրցաշարերում մեր հավաքականի 67-րդ խաղը կլինի: Մեր ֆուտբոլիստները տոնել են 15 հաղթանակ, 8 խաղ ավարտել են ոչ-ոքի, 43-ում պարտվել են: Խփած եւ բաց թողած գնդակների տարբերությունն է 56-166: Հուսանք, որ երիտասարդական հավաքականը հաջող կսկսի ընտրական մրցաշարը:

# Արսեն Վենգերը մնում է «Արսենալում»

**Լոնդոնի «Արսենալի» գլխավոր մարզիչ Արսեն Վենգերը, որին համարում էին Մադրիդի «Ռեալի» ղեկը ստանձնելու հիմնական հավակնորդ, հաջորդ մրցաշրջանում էլ կմարզի թիմը: Ակումբի հետ նրա պայմանագրի ժամկետը լրանում է 2011-ին:**

**1996-ից ստանձնելով «Արսենալի» ղեկը, Վենգերը դարձել է թիմի խորհրդանիշներից մեկը: Մինչ «Արսենալը» գլխավորելը նա աշխատում էր Ճապոնիայում եւ նրա նշանակումը թիմի երկրպագուների համար անակնկալ էր: Ֆրանսիացի մասնագետի օրոք «Արսենալը» դարձավ երկրի ուժեղագույն ակումբներից մեկը՝ 3 անգամ նվաճելով Անգլիայի չեմպիոնի, 4 անգամ՝ գավաթակրի տիտղոսները: Բացի այդ էլ, 2006-ին թիմը հասավ չեմպիոնների լիգայի եզրափակիչ: Վենգերը մարզչական հաջող գործունեություն ծավալեց հատկապես պատանի ֆուտբոլիստների հետ: «Արսենալը» տարիներ շարունակ միայն պատանի ֆուտբոլիստներ էր գնում եւ հասնում էր հիանալի արդյունքների:**

**Վերջերս Մադրիդի «Ռեալի» նախկին նախագահ Ֆլորենտինո Պերեսը, որն իր թեկնածությունն է առաջադրել ակումբի նախագահի պաշտոնում, հայտարարել էր, որ ընտրվելու դեպքում թիմ կհրավիրի Արսեն Վենգերին: Հաշվի առնելով, որ ժամանակին Պերեսին հաջողվել էր արքայական ակումբում ընդգրկել Լուիշ Ֆիգուին, Ռոնալդոյին, Ռոբերտո Կառլոսին, Զինեդին Զիդանին ու Դեւիդ Բեքհեմին, «Արսենալի» երկրպագուները խիստ անհանգստացած էին Վենգերի ճակատագրով: Եվ նրանք ի պաշտպանություն Վենգերի, բողոքի ակցիաներ կազմակերպեցին:**



**Օրերս կայացավ Արսեն Վենգերի եւ «Արսենալի» գործադիր տնօրեն Իվան Գազիդիսի հանդիպումը, որը տեւեց 3 ժամից ավելի: Հանդիպումից հետո Վենգերը հայտարարեց, որ մնում է թիմում եւ անհանգստանալու հարկ չկա: Եվ եթե ինչ-որ բան փոփոխվի, ապա այդ մասին կտեղեկացնի ֆուտբոլիստներին: Հանդիպման ժամանակ քննարկվել են հաջորդ մրցաշրջանում թիմի ծրագրերը: Հայտնի է դարձել, որ նոր ֆուտբոլիստների գնման համար ծրագրվում է 12-13 մլն ֆունտ ստեռլինգ հատկացնել: Այդ գումարին Վենգերը կարող է ավելացնել թիմի ֆուտբոլիստների վաճառքից ստացվածը: Վենգերը հայտարարել է, որ այս անգամ հրաժարվելու է երիտասարդ ֆուտբոլիստներ թիմ հրավիրելուց, այլ փորձելու է գնել փորձառու եւ հմուտ խաղացողների:**

ՖԻՖԱ-Ի ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

# ՀՀ հավաքականը 131-րդ տեղում է

**Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը ՖԻՖԱ-ի դասակարգման հերթական ցուցակում 131-րդն է: Նախորդ ամսվա համեմատ մեր ընտրանին 6 հորիզոնականով նահանջել է: ՀՀ հավաքականը ցուցակում գտնվում է Չադի, Մադագասկարի եւ Ղազախստանի ընտրանիների հարեւանությամբ: Աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում ՀՀ հավաքականի մրցակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշն ունի Եվրոպայի չեմպիոն Իսպանիայի ընտրանին, որը գլխավորում է դասակարգման ցուցակը: Թուրքիայի հավաքականը 2 տեղով բարձրացել ու հանգրվանել է 12-րդ հորիզոնականում: 5 տեղով առաջադիմել են բոսնիացիները՝ զբաղեցնելով 33-րդ հորիզոնականը: Բելգիայի հավաքականը մեկ տեղով նահանջել է եւ ընթանում է 63-րդ տեղում: 113-րդ տեղում իր դիրքը պահպանել է Էստոնիայի հավաքականը: Նախորդ ամսվա համեմատ ամենամեծ առաջընթացն ունեցել է Լիբիայի հավաքականը, որը 14 հորիզոնականով բարձրացել է, իսկ ահա Կոնգոյի ընտրանին 19 տեղով նահանջել է: Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հավաքականներից ամենաբարձր անհատական վարկանիշն ունի Ռուսաստանի ընտրանին, որը 9-րդ տեղում է: 2-րդ արդյունքն ունեն ուկրաինացիները, որոնք 19-րդ տեղում են: Վրաստանի հավաքականը 105-րդն է, իսկ ահա ադրբեջանցիները 140-րդ տեղում են:**

**Լավագույն տասնյակում փոփոխություններն աննշան են: Մեկական տեղով բարձրացել են Հոլանդիայի, Իտալիայի եւ Անգլիայի հավաքականները, իսկ գերմանացիները, բրազիլացիներն ու արգենտինացիները մեկ հորիզոնականով նահանջել են: 8-10-րդ տեղերում դիրքերը պահպանել են Խորվաթիայի, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի հավաքականները:**

# Փարիզը կհյուրընկալի շախմատիստներին

Հունիսի 24-25-ին Փարիզում արագ շախմատի մրցախաղ կանցկացնեն Հայաստանի եւ Ֆրանսիայի հավաքականները: Հայաստանի հավաքականում հանդես կգան օլիմպիական չեմպիոններ Լեւոն Արոնյանը, Վլադիմիր Հակոբյանը, Գաբրիել Սարգսյանը, Տիգրան Պետրոսյանն ու Արտաշես Մինասյանը: Նրանց մրցակիցները կլինեն Մաքսիմ Վաշիե Լագրավը, Լորան Ֆրեսինեն, Ժոել Լոթյեն եւ Քրիստիան Բաուերը:

Շախմատային այս յուրօրինակ մրցախաղի կազմակերպիչը ֆրանսիական «Մոդելիեր» ընկերությունն է, որի նախագահը Վարդան Գաբրիելյանն է: Բնականաբար, մրցախաղի անցկացմանը կօժանդակեն երկու երկրների շախմատի ֆեդերացիաները:

# Քառյակը շարունակում է պայքարը



**Թենիսի «Ռոլան Գարոսի» մրցաշարում հայտնի դարձան կիսաեզրափակիչի բոլոր մասնակիցները: Տղամարդկանց մրցաշարում պայքարն է շարունակում շվեյցարացի Ռոջեր Ֆեդերերը: Ռաֆայել Նադալի պարտությունից հետո Ֆեդերերը հաղթողի գլխավոր հավակնորդն է: Քառորդ եզրափակիչում նա հաղթեց Գաել Մոնֆիսին (7-6, 6-2, 6-4): Կիսաեզրափակիչում նրա մրցակիցը կլինի Խուան Մարտին Դել Պոտրոն: Վերջինս պարտության մատնեց իսպանացի Թոմի Ռոբրեդոյին (6-3, 6-4, 6-2): Կիսաեզրափակիչի մյուս զույգը կազմել են Ռոբին Սոդերլինգն ու Ֆեռնանդո Գոնսալեսը: Ռաֆայել Նադալին հաղթելուց հետո շվեդ Սոդերլինգը պայքարից դուրս մղեց նաեւ Նիկոլայ Դավիդենկոյին (6-1, 6-3, 6-1): Իսկ Գոնսալեսն առավելության հասավ Էնդի Մարեյի նկատմամբ (6-3, 3-6, 6-0, 6-4):**

**Կանանց մրցապայքարում անսպասելիորեն թույլ հանդես եկավ Մարիա Շարապովան՝ խոշոր հաշվով (0-6, 2-6) զիջելով Սլովակիայի ներկայացուցիչ Դոմինիկա Ցիբուլկովային: Ռուսաստանցիներ Դինարա Սաֆինան ու Սվետլանա Կուզնեցովան ի տարբերություն Շարապովայի, վստահ խաղացին: Նրանք հաղթեցին համապատասխանաբար Վիկտորիա Ազարենկոյին ու Սերենա Ուիլյամսին: Կիսաեզրափակիչում Սաֆինան կմրցի Ցիբուլկովայի հետ, իսկ Կուզնեցովայի մրցակիցը կլինի Սամանտա Ստոսուրը: Վերջինս առավելության հասավ Սորանա Կիրստյայի նկատմամբ:**

# Անանդն առջեւում է

Հունգարական Միշկոլց քաղաքում սկսվել է արագ շախմատի մրցախաղը հունգարացի գրոսմայստեր Պետեր Լեկոյի եւ աշխարհի չեմպիոն Վիշվանաթան Անանդի միջեւ: Մրցակիցներն օրական 2 պարտիա են անցկացնում: Մրցաշարը բաղկացած է 8 պարտիայից: Մրցակիցների առաջին պարտիայում գրանցվեց ոչ-ոքի, իսկ 2-րդը շահեց Անանդը, որն էլ առայժմ առջեւում է 1,5-0,5 հաշվով:

Նշենք, որ 2005-ից սկսած, Պետեր Լեկոն Միշկոլցում արագ շախմատի մրցախաղ է անցկացնում: 2005-ին նրա մրցակիցն անգլիացի Մայքլ Ադամսն էր: Հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի՝ 4-4: Մրցակիցներից յուրաքանչյուրը 3-ական հաղթանակ տոնեց, 2 պարտիա էլ խաղաղ ելք ունեցավ:

Հաջորդ տարի Լեկոյի մրցակիցը Կարպովն էր: Այս անգամ հունգարացի գրոսմայստերը հաղթեց 4,5-3,5 հաշվով: Ընդ որում մրցավեճի ելքը վճռեց միակ արդյունավետ պարտիան, որը 3-րդ տուրում իր օգտին գրանցեց Լեկոն:

2007-ին Լեկոն ուժերը չափեց Վլադիմիր Կրամնիկի հետ: Այս անգամ մրցակիցն ուժեղ գտնվեց՝ 4,5-3,5: 2 հաղթանակ տոնեց Կրամնիկը, մեկը՝ Լեկոն: Անցյալ տարի Լեկոյի նկատմամբ զգալի առավելության հասավ Մագնուս Կառլսենը՝ հաղթելով 5-3 հաշվով: Ընդ որում, Լեկոյին այդպես էլ չհաջողվեց գեթ մեկ հաղթանակ տոնել Կառլսենի նկատմամբ:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# «Ոչ մի ճառով չի հաղթահարվի տարիների վաղեմություն ունեցող անվստահությունը»

## Իսլամական աշխարհին հղած ուղերձում նշել է նախագահ Օբաման

Երեկ Կահիրեում ուղերձով իսլամական աշխարհին է դիմել ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման: Մինչ այդ նա հանդիպել է Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքին, հավաստիացնելով, որ հետամուտ է լինելու տարածաշրջանի երկրների հետ հարաբերությունների համագործակցության սկզբունքով զարգացմանը: Նախագահ Օբամայի ուղերձի տեքստը հրապարակվել է նախքան նրա ելույթը, որը շուրջ 35-40 րոպե է տեւել:

ԱՄՆ նախագահն ուղերձում ընդարձակ մեջբերումներ է կատարել Ղուրանից, Հին եւ Նոր կտակարաններից, ընդգծել է իր գոհունակությունը Կահիրեում գտնվելու առթիվ, ապա եւ ասել. «Մանկության տարիներին ես արթնացել եմ ազանի հնչյուններով: Ինչպես արդեն ասել եմ Անկարայում, ԱՄՆ չի կարող պատերազմական վիճակում լինել իսլամի հետ: Իսլամն ԱՄՆ-ի անքակտելի մասն է: Ես իմ պարտքն եմ համարում պայքարել իսլամի նկատմամբ կանխակալ մոտեցումների դեմ»:

Այնուհետեւ Բարաք Օբաման շարունակել է. «Ես եկել եմ այստեղ փոխգործակցության նոր եզրեր որոնելու համար: Հասկանում եմ, որ այդպիսի փոփոխությունները մեկ օրում չեն իրականացվում եւ ոչ մի ճառ չի կարող իսպառ վերացնել տարիների վաղեմություն ունեցող անվստահությունը: Առաջխաղացման համար պարտավոր ենք իրար նկատմամբ լինել անկեղծ եւ սովորել միմյանցից»:

Միաժամանակ նախագահ Օբաման ընդգծել է, որ հետամուտ է ողջ աշխարհի, ինչպես նաեւ ԱՄՆ-ի անվտանգությանն սպառնացող ծայրահեղության դեմ պայքարին եւ ընդգծել. «Չենք կարող հաշտվել խաղաղ բնակիչների սպանության հետ: Ով անմեղ մարդու սպանություն է կատարում, սպանում է ողջ մարդկությանը: Ով կարողանում է փրկել գեթ մեկ մարդու, մարդկությանն է փրկում»: Օբամայի ելույթը հաճախակի ընդհատվել է բուռն ծափահարություններով:

Ելույթում Օբաման անդրադարձել է պաղեստինա-իսրայելական հակամարտությանը եւ նշել. «Մերձավոր Արեւելքում խաղաղության հաստատման ուղին անցնում է երկու պետությունների գոյակցությամբ: «Համասը» պետք է ճանաչի Իսրայելին եւ հրաժարվի բռնություններից, իսկ Իսրայելն էլ պետք է վերջ տա վերաբնակների համար նոր բնակավայրերի կառուցմանը: Մենք դա չենք ընդունում»: Ինչ վերաբերում է Իրանի միջուկային ծրագրին, ապա ԱՄՆ նախագահն ասել է, որ իր երկիրը դեմ է միջուկային զենքի տարածմանը, սակայն Իրանը կարող է խաղաղ նպատակով տիրանալ միջուկային էներգիային:

Նախագահ Օբամայի իսլամական աշխարհին հղած ուղերձի գնահատականները միանշանակ չեն: Քաղաքական որոշ դիտորդներ, ելնելով Իրաքի եւ Աֆղանստանի դեմ ԱՄՆ-ի սանձազերծած պատերազմներից, ինչպես նաեւ Իսրայելին ցուցաբերած անվերապահ աջակցությունից, կարծիք են հայտնում, որ նույնիսկ Օբամային չի հաջողվի հաղթահարել մահմեդական երկրների հետ Արեւմուտքի հակասությունները: Ոմանք էլ, խոսքը արաբական դիտորդների մասին է, ընդգծում են խոսքից գործին անցնելու անհրաժեշտությունը, թե սոսկ ուղերձով հակասությունները չեն հաղթահարվի:

Նրանց է միանում Իրանի Իսլամական Հանրապետության հոգեւոր առաջնորդ այաթոլլահ Ալի Խամենեին, հայտարարելով, որ Օբամայի ուղերձն ի վիճակի չի լինելու փոխել մերձավորարեւելյան երկրների բացասական վերաբերմունքը ԱՄՆ-ի նկատմամբ, ավելացնելով. «Տարածաշրջանի երկրները ատում են Ամերիկային: Որքան էլ ամերիկացիները ջերմ եւ գեղեցիկ ճառերով դիմեն մահմեդական ժողովուրդներին, դա չի փոխի իրերի դրությունը»:

Անկախ ուղերձի գնահատականներից, հարկ է նշել, որ նախագահ Օբաման ուղերձով հիրավի փորձել է անկեղծորեն շահել մահմեդական ժողովուրդների համակրանքը եւ ջանքեր է գործադրել, որ բարելավի իսլամական աշխարհի հետ ԱՄՆ-ի հարաբերությունները: Այդ մասին են վկայում Բարաք Օբամայի ուղերձի ոճն ու բովանդակությունը:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

ՍՏԱՑԻ՛Ր ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ՉԼՔԵՌԱՆԱԼՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԵՎ ...

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
FONDATION UNIVERSITÉ FRANÇAISE EN ARMÉNIE




Հայաստանում ֆրանսիական համալսարանը հայտարարում է ընդունելություն բակալավրիատի կրթական ծրագրով 2009-2010 ուսարվա համար հետեւյալ ֆակուլտետներում՝

- **Առեւտուր եւ մարքեթինգ**
- **Կառավարում**
- **Իրավունք**

Ուսումառության ավարտին ուսանողները ստանում են ֆրանսիական եւ հայկական պետական նմուշի դիպլոմներ եւ կարող են ուսումը շարունակել բուհի մագիստրատուրայում:

**Հայտերն ընդունվում են 2009 թ. հունիսի 11-ից հուլիսի 11-ը ժամը 10.00-ից մինչեւ 17.00:**

*Ներկայացվող փաստաթղթեր.*

- Միջնակարգ կրթության վկայական (բնօրինակը կամ պատճենը),
- 3x4 չափի մեկ լուսանկար,
- Անձնագրի կամ ծննդյան վկայականի բնօրինակը եւ պատճենը (ծննդյան վկայականի դեպքում՝ նաեւ տեղեկանք բնակության վայրից եւ անձը հաստատող փաստաթուղթ լուսանկարով),
- Զինվորական հաշվառման վկայականը,
- Գործերի ընդունման համար վճարի անդորրագիրը (մեկ ֆակուլտետ դիմելու դեպքում գործերի ընդունման վճարը կազմում է 7200 դրամ, միաժամանակ երկու ֆակուլտետ դիմելու դեպքում՝ 9600 դրամ):



Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝

*Հայաստանում ֆրանսիական համալսարան*
*0037 ք. Երեւան, Դավիթ Անհաղթի 10:*
*Հեռ.՝ 24 96 45 Էլ. փոստ՝ communication@ufar.am*

... ԴԱՐՁԻ՛Ր ՎԱՂՎԱ ՂԵԿԱՎԱՐԸ

ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔ

# Վաշինգտոնը Սիրիայի հետ հարաբերությունների բարելավման նախադրյալներ է ստեղծում

**Երեկվա համարում «Ազգը», անդրադառնալով նախագահ Բարաք Օբամայի Կահիրեից իսլամական աշխարհին հղած ուղերձին, նշել էր, որ դա եթե չհանգեցնի հակաամերիկյան տրամադրությունների վերացմանը մահմեդական երկրներում, գոնե տարածաշրջանում կթուլացնի լարվածությունը: Միաժամանակ նշվել էր ԱՄՆ պետքարտուղարության մայիսի 29-ի հրամանագրի մասին, որը ամերիկյան բոլոր դեսպանատներից ու հյուպատոսարաններից պահանջում էր հուլիսի 4-ի անկախության օրվա առթիվ կազմակերպվող ընդունելություններին հրավիրել տվյալ երկրում հավատարմագրված իրանցի դիվանագետներին:**

**Հրամանագրին հետեւել է ԱՄՆ պետքարտուղարի եւ Սիրիայի արտգործնախարարի հեռախոսազրույցը: Կողմերը համաձայնության են եկել, որ ամերիկյան զինվորական եւ դիվանագիտական պատվիրակությունները պետք է այցելեն Դամասկոս: Այդ մասին հայտարարվել է հունիսի 3-ին, իսկ դիտորդները դա գնահատել են որպես «երկու երկրների հարաբերությունների հետագա զարգացման նախանշան»:**

**Ենթադրվում է, որ ամերիկյան պատվիրակությունների Դամասկոս այցելության ընթացքում կողմերը կկենտրոնանան Իրաքի եւ Իրանի խնդիրների վրա, կքննարկեն Սիրիա-Իսրայել բանակցությունները, ինչպես նաեւ պաղեստինա-իսրայելական խաղաղ կարգավորման գործընթացը վերսկսելու հնարավորությունները: Ամենայն հավանականությամբ, առաջիկա շաբաթվա մեջ Դամասկոս կուղեւորվի նախագահ Օբամայի Մերձավոր Արեւելքի գծով հատուկ ներկայացուցիչ Ջորջ Միտչելը, ստուգելու Իսրայել-Սիրիա բանակցությունների վերսկսման համար նախադրյալների առկայությունը:**

**Ինչ վերաբերում է ամերիկյան պատվիրակություններին, ապա առաջինը Դամասկոս կայցելի զինվորական պատվիրակությունը՝ հավանաբար մի քանի շաբաթ հետո: Որքան էլ Սիրիայի հետ ԱՄՆ-ի հարաբերությունների բարելավմանը միտված այս զարգացումները միջազգային շրջանակներում անմիջականորեն պայմանավորվեն պետքարտուղար Հիլարի Քլինթոնի եւ արտգործնախարար Վալեդ ալ Մուալիմի հեռախոսազրույցով, դրանց հիմքում ԱՄՆ-ի միջինարեւելյան քաղաքականությունը վերանայելու նախագահ Օբամայի դիրքորոշումն է:**

Հ. ՉԱՔՐՅԱՆ

**Supply of IT Equipment for the State Revenues Committee of the Republic of Armenia**
**EuropeAid/128678/L/SUP/AM**

The European Commission intends to award a supply contract for supply of IT equipment for establishment of the EDMS for State Revenue Committee in Armenia, with financial assistance from the Tacis programme of the European Communities. The tender dossier is available from European Commission Delegation in Armenia, 21 Fric Street, 0002, Yerevan, Armenia, and will also be published on the EuropeAid website: **https://webgate.ec.europa.eu/europeaid/online-services/index.cfm?do=publi.welcome.** The deadline for submission of tenders is 6 July 2009 14:00 local Armenian Time. Possible additional information or clarifications/questions shall be published on the EuropeAid website:

**https://webgate.ec.europa.eu/europeaid/online-services/index.cfm?do=publi.welcome**

**Ինֆորմացիոն տեխնոլոգիաների սարքավորումների մատակարարում Հայաստանի Հանրապետության Պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար**
**128678/L/SUP/AM**

Եվրոպական հանձնաժողովը, Tacis ծրագրի ֆինանսական օժանդակությամբ, Հայաստանի Պետ. եկամուտների կոմիտեում փաստաթղթերի էլեկտրոնային կառավարման համակարգի ստեղծման նպատակով պատրաստվում է ՏՏ սարքավորումների մատակարարման պայմանագիր կնքել: Հայտամրցույթի փաստաթղթերը կարող եք ստանալ Եվրոպական հանձնաժողովի հայաստանյան պատվիրակությունից (հասցե՝ Ֆրիկի 21, Երեւան 0002) կամ այցելել EuropeAid կայք. **https://webgate.ec.europa.eu/europeaid/online-services/index.cfm?do=publi.welcome .**

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2009թ. հուլիսի 6-ը՝ ժամը 14:00 Երեւանի ժամանակով: Հավելյալ տեղեկատվության կամ պարզաբանումների / հարցերի համար կարող եք այցելել հետեւյալ կայքէջ:

**https://webgate.ec.europa.eu/europeaid/online-services/index.cfm?do=publi.welcome**

*Սարերի գարունը մեկ գավաթի մեջ*

ՍԱՐԻ ԹԵՅ

ՈՒՐՑԻ ԵՎ ԴԱՂՁԻ ԸՆՏԻՐ ԹԵՅ

MOUNTAIN TEA ՍԱՐԻ ԹԵՅ

25 փաթեթ մեկ տուփի մեջ
և ընդամենը 1-2 րոպեից կարող եք
վայելել ընտիր որակի ուրցի թեյ

առնվազն ամիսը մեկ արժե ընտրել բարձրորակը

Մեծածախ գնումների համար զանգահարել 47-27-20, 47-03-63

## Գործունեության դադարեցման մասին

**Կենտրոնական բանկի նախագահի հունիսի 2-ի թիվ 1/690Ա որոշման համաձայն գրանցվել են «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ «Վեգա-1» սահմանափակ ֆինանսական գործառնություններ իրականացնող մասնաճյուղի և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ «Վեգա-2» սահմանափակ ֆինանսական գործառնություններ իրականացնող մասնաճյուղի գործունեության դադարեցումները:**

***ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 4.06.2009, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: